

## ԱՐԺԱՆԹԻՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՏԱՊԱԼԵՑ ԹՈՒՐՔԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՅՑԸ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

Անցեալ շաբթուան ընթացքին, արժանթինահայ գաղութը հաւաքաբար եւ ազգային ընդվզումով իրազեկ եղաւ, որ Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիպ Էրտողան պաշտօնական այցելութիւն պիտի տայ Արժանթին, ինչ որ խոր մտահոգութիւն պատճառեց բոլորին, եւ արդար դժգոհութեամբ համակեց հանրային շրջանակները:

Ազգային այս ընդվզումը կրկնապատկուեցաւ, երբ իմացուեցաւ, որ ցեղասպան պետութեան ներկայացուցիչի այցելութիւնը կը կատարուի ո՛չ միայն դիւանագիտական ընթացիկ շրջագիծին մէջ, այլեւ Պուէնոս Այրէսի մէջ պիտի տեղադրուի Մուսթաֆա Քեմալի կիսանդրին եւ Էրտողան ներկայ պիտի ըլլայ այդ առթիւ տեղի ունեցող բացման արարողութեան:

Այս երկրորդ պարագան շատ աւելի խորացուց արժանթինահայ գանգուածներու ընդվզումը, առաւել՝ վիրաւորելով հայ մարդոց եւ համայնքային բոլոր կազմակերպութիւններու ազգային արժանաւորութիւնն ու ազգային յիշողութիւնը:

Հաւաքական այս ցատկին վրայ կ'աւելնար նաեւ արժանթինեան պետական իշխանութիւններու կողմէ ցուցաբերուած թոյլատու վերաբերումը, այն իրողութեամբ, որ Արժանթին մէկն է բազմաթիւ այն պետութիւններէն, որոնք ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը,

եւ Արժանթինի մէջ հայկական հոծ զանգուածի գոյութիւնը արդիւնքն է նոյն այդ ցեղասպանութեան:

Ուստի, նկատի ունենալով վերելի հանգամանքները, Հայց. Առաք. Եկեղեցւոյ Կեդր. Վարչութեան հրահրով, Հինգշաբթի, 27 Մայիսին, Ազգ. Առաջնորդարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում մը՝ ներկայութեամբ տեղուց բոլոր կազմակերպութիւններուն:

Յետ խորհրդակցութեան, ժողովը որոշեց դիմել հարկ եղած բոլոր միջոցներուն, արտայայտելու համար արժանթինահայ գաղութի բողոքն ու դժգոհութիւնը եւ պետական պատկան մարմիններուն, մամուլին, տեղեկատուութեան այլ սպասարկութիւններուն ընդհանրապէս Արժանթինի հանրութեան փոխանցելու համար Հայ ժողովուրդի արդարագոյն եւ ամենէն անժամանցելի հարցը:

Շնորհիւ բոլոր կազմակերպութիւններու կողմէ ցոյց տրուած ազգային ոգին եւ համագործակցութեան՝ կարելի եղաւ ձեռք բերել կրկնակի յաջողութիւն. - Նախ ջնջուեցաւ Քեմալի կիսանդրի տեղադրման փորձը, այնուհետեւ Թուրքիոյ վարչապետը ջնջեց Արժանթին տալիք իր այցելութիւնը:

Այս գոյգ ձեռքբերումներուն անդրադարձան տեղուց ձայնասփիւռի եւ հեռատեսիլի գրեթէ բոլոր կայանները:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԹՈՒՐՔԻԱՆ ՓՈՐՁՈՒՄ Է ՆԵՐԽՈՒԺԵԼ ՄԻ ՈԼՈՐՏ, ՈՐՏԵՂ ԱՆԵԼԻՔ ՉՈՒՆԻ»

Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեան Յունիս 1-ին ելոյթ ունեցած է Տոնի Ռոստովի հայ համայնքի անդամներու հետ հանդիպման ընթացքին ու խօսելով հայ-թրքական յարաբերութիւններու մասին ըսած է, որ Թուրքիա կը փորձէ ներխուժել ոչ թող մը ներս, ուր անելիք չունի:

«Դուք իհարկէ տեղեկ էք, որ մենք սառեցրել ենք հայ - թուրքական արձանագրութիւնների վաւերացման գործընթացը: Դրա հիմնական պատճառը շատ պարզ է. Թուրքիան այսօր պատրաստ չէ վաւերացնել արձանագրութիւնները: Դրա տապալումն արդարացնելու նպատակով նա նորանոր նախապայմաններ է առաջ քաշում: Աւելին՝ նա փորձում է ներխուժել մի ոլորտ, եւ նկատի ունեմ Արցախեան հարցի լուծման գործընթացը, որտեղ ակնյայտօրէն անելիք չունի», - ընդգծած է Սերժ Սարգսեան:

«Ոչ յուսալի եւ անվստահելի գործընկերոջ հետ, որ պարբերաբար խախտում է նախնական պայմանաւորութիւնները, մենք ներկայ պահին խօսելիք չունենք: Ժա-

մանակը ցոյց տուեց, որ Եւրոպայի վերջին փակ սահմանը բացելու համար մենք մեր կողմից արեցինք առաւելագոյնը, իսկ Թուրքիան պատրաստ չէ դրան», - յայտարարած է Սարգսեան:

«Ինչ կը վերաբերի Լեւոնալին Ղարաբաղի խնդրին, ապա մենք աներկբայ հնչեցրել ենք, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը մենք չենք պատրաստուում սակարկել ունէ մէկի հետ», - աւելցուցած է Սերժ Սարգսեան:

Անդրադառնալով Հայաստանի եւ Ռուսաստանի յարաբերութիւններուն ան ըսած է, որ անոնք ամուր հիմքերու վրայ են, եւ համոզմունք յայտնած է, որ այդպէս ալ կը շարունակուին:

«Կայ փայլուն բարեկամութիւն Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ: Աւելին՝ կայ փոխմբբուման եւ փոխվստահութեան այնպիսի աստիճան, որը կարող է օրինակ դառնալ շատերի համար», - Հայաստանի նախագահի մամուլի գրասենեակի փոխանցած տեղեկութիւններուն համաձայն՝ ըսած է Սերժ Սարգսեան:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԲԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՐԱՋԱՆԳԸ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԿԻՐԱՌԵՆ ՉԻՆՈՒՈՐԱՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ



Ոստիկանները կը խոչընդոտեն ցուցարարներու մուտքը Ազատութեան հրապարակ

Հելսինքեան Քաղաքացիական Ասամբլիայի վանաձորի գրասենեակը, Հելսինքեան ասոցիացիան, Թրանսփարենսի ինթերնէշնալ հակակոռուպցիոն կենտրոնը, Ժուռնալիստների «Ասպարէզ» ակումբը եւ այլ հասարակական կազմակերպութիւններ Յունիս 2-ին տարածած են յայտարարութիւն մը, վերջին օրերուն Երեւանի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն եւ ընդդիմադիր երիտասարդներու եւ լրագրողներու ձեր-

բակալութեան կապակցութեամբ: «2010 թ. Մայիսի 28-ից մինչ օրս Հայաստանի իշխանութիւնները, շարունակելով 2008թ. իրենց գործեւառնք, յանձնա յատուկ ծառայութիւնների եւ ոստիկանութեան, ապօրինաբար խոչընդոտում են ընդդիմութեան ներկայացուցիչների մուտքը Երեւանի «Ազատութեան» հրապարակ:

«Օրէնքի ակնյայտ խախտումները եւ լրագրողներու ձեր-

Շաբ.ը էջ 4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՄԱՐԴՈՒ ԻՐԱԲՈՒՆՔՆԵՐԸ ԽԱԽՏՈՂՆԵՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԵԱՆ ՉԵՆ ԵՆԹԱՐԿՈՒԻՐ

«Միջազգային Ներում» (Amnesty International) իրաւապաշտպան կազմակերպութիւնը անցեալ շաբաթ հրապարակեց իր 2010-ի տարեկան զեկոյցը:

Զեկոյցին մէջ Հայաստանի մասին ըսուած է, որ մարդու իրաւունքներու խախտումներու համար մեղաւորները պատասխանատուութեան չեն ենթարկուիր: Խօսքի ազատութիւնը սահմանափակուած է: Յարձակումներ կը կատարուին լրագրողներու վրայ: Տակաւին չէ վերացուած քաղաքի կեդրոնը հանրահաւաք կատարելու արգելքը, որ դրուեցաւ 2008 թուականին՝ արտակարգ դրութեան ժամանակ: Կանանց ու աղջիկներու իրաւունքները բռնութիւններէ պաշտպանելու միջոցները չեն համապատասխաներ միջազգային չափանիշերուն: Կառավարութիւնը չկարողացաւ իրականացնել այլընտրանքային ծառայութիւն առաջարկել:

«Ամփոփ տեղեկանք» բաժինին մէջ «Միջազգային Ներումը» կ'արձանագրէ, որ Յունիսի 19-ին Ազգային ժողովը համաներում

յայտարարեց 2008-ի Մարտի իրադարձութիւններու ժամանակ ձերբակալուածներու նկատմամբ: Համաներումը տարածուեցաւ այն անձերու վրայ, որոնք չէին մեղադրուած բռնութիւններու համար, այլ միայն անոնց վրայ, որոնք դատապարտուած էին մինչեւ 5 տարի ազատազրկման:

«Միջազգային Ներումը» իր զեկոյցի «Անպատժելիութիւն» բաժինով կը գրէ. «Մինչեւ տարեկերջ ոչ մէկ անկախ հետաքննութիւն չէ կատարուած՝ ապացուցելու, որ ոստիկանութիւնը ուժ չէ կիրառած 2008-ի իրադարձութիւններու ժամանակ: 2008-ի Յունիսին ստեղծուեցաւ խորհրդարանական յատուկ յանձնաժողով՝ իրադարձութիւնները ուսումնասիրելու համար, սակայն ան աշխատանքի չանցաւ, քանի որ ընդդիմութիւնը մերժեց մասնակցել անոր: 2009-ի Յունիսին նախագահը իր հրամանագրով լուծարեց Փաստահաւաք խումբը, ուր կային տարբեր քաղաքական խմբակցութիւններու եւ մարդու իրաւունքներու պաշտպանի ներկայացուցիչներ:

ՐԱՅԱՍՏԱՆ ՄԱՍԻՍ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Հայաստանում երրորդ ուժի առաջացման մասին բանավեճը բլոգային եւ նեղ ֆորումային մակարդակից աստիճանաբար անցնում է աւելի լայն հարթութիւն:

Քննարկումները տեղի են ունենում մի քանի հիմնական դրոշմներով. 1. Ընդդիմութիւնը, ի դէմ Հայ Ազգային կոնգրէսի, ոչ բաւարար յստակութեամբ է շարադրում իր նպատակները, յատկապէս ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցին, նա անհետեւողական է եւ նոյնիսկ պասիւ է իր գործողութիւններում եւ հիասթափեցրել է իր համակիրների մի մասին. 2. Ընդդիմութիւնը ապաւինում է իշխանութեան տարակարծութիւններին, ակնկալելով կոալիցիայի փլուզում. 3. Ռոբերդ Քոչարեանի վերադարձը աւելի շատ վախեցնում է Սերժ Սարգսեանին, քան Լեւոն Տէր-Պետրոսեանին. 4. Երկրում ամրացել է հասարակական շարժումը, որը արդէն հասել է որոշակի յաջողութիւնների, եւ այն կարող է վերածուել երրորդ ուժի. 5.

կական նախաձեռնութիւնը, առաւել մօտ են շարքային քաղաքացուհի: Այդ քաղաքացին հասկանում է, իհարկէ, որ քաղաքացիական խնդիրների լուծման արմատը գտնուում է քաղաքական հարթութեան մէջ, բայց քաղաքական փոփոխութիւններն այնքան հեռու են, իսկ կոնկրէտ հարցեր կարելի է լուծել այստեղ եւ այժմ:

Քաղաքական եւ քաղաքացիական շահերի այդպիսի տարանջատումը այդքան էլ բնական չէ: Որովհետեւ քաղաքական պահանջների հիմքում պէտք է ամենից առաջ դրուած լինի քաղաքացիական շահը: Եթէ քաղաքական ուժը սահմանազատում է այդ շահից եւ կենտրոնանում է գուտ քաղաքական խնդիրների լուծման վրայ, այն սկսում է անհասկանալի դառնալ լայն մասսաների համար: Քաղաքական ուժերը պէտք է նաեւ հետապնդեն կոնկրէտ քաղաքացիական շահ, եւ այդ իմաստով գազի թանկացման դէմ Հայ Ազգային կոնգրէսի հայցը վատ փորձ չէր: Բայց աւաղ,

**Հայաստանի ներկայիս քաղաքական պայմաններում, միակ գաղափարը, որը կարող է միաւորել ժողովրդին եւ որը ունի մեծ ներուժ, հանդիսանում է քաղաքացիական**

հասարակական կարծիքը, արտայայտուելով ճիշդ ձեւով, կարող է ստիպել իշխանութեանը փոխել որոշումները, քանի որ իշխանութիւնը չունի ոչ քաղաքական շարժմանը հակադրելու որեւէ բան:

Այդ, կարծես թէ քառասուն շարժման մէջ ներգրաւուած են մարդիկ, որոնք հետապնդում են միեւնոյն նպատակը, յամենայն դէպս հռչակումների մակարդակով: Եւ քաղաքական ընդդիմութիւնը, եւ երրորդ ուժի ստեղծման հասարակական նախաձեռնութիւնը, եւ իրաւապաշտպան շարժումը, եւ երիտասարդական ֆորումներն իրենց առաջ մի խնդիր են դնում՝ իրաւական հասարակութեան ձեւաւորումը, հիմնուած Սահմանադրութեան, իրաւունքների յարգման, ազատութիւնների, պատուի եւ արժանապատուութեան, նորմալ ընտրական համակարգով, «մաքուր տնտեսութեամբ եւ գործող արդարադատութեամբ»: Քաղաքական ընդդիմութիւնը փորձում է դրան հասնել քաղաքական մեթոտներով՝ ընտրութիւններ, հանրահաւաքներ, ճնշում իշխանութեան վրայ: Հասարակական շարժումները աշխատում են հիմնականում հրապարակային ռեժիմով եւ խօսում են ոչ թէ քաղաքական փոփոխութիւնների (իշխանափոխութիւն), այլ կոնկրէտ հրատապ խնդիրների լուծման մասին՝ լեզուի մասին օրէնք, «Մոսկուա» կինոթատրոն, Խալաֆեանի գործ, Ուսանողական այգի:

Ի տարբերութիւն ընդդիմութեան, որն ունի բաւական շատ հետեւորդներ, հասարակական շարժումը դեռեւս այդքան հզօր չէ: Դրա հետ մէկտեղ, գաղափարները, որոնք առաջ է քաշում հասարա-

այդ պրակտիկական շատ քիչ է:

Եւ հակառակը, հասարակական նախաձեռնութիւնները կենտրոնանում են հիմնականում կոնկրէտ գործողութիւնների վրայ, չփորձելով դրանց տալ քաղաքական բնոյթ, նոյնիսկ խուսափել դրանից: Մինչդեռ հասարակական նախաձեռնութիւններում կուսակցութիւնների ներգրաւումը կարող էր բաւական աւելացնել բողոքի ակցիաների ներուժը: Ասենք, քաղաքացիական նախաձեռնութիւնները կարող էին դիմել Հայ Ազգային կոնգրէսին, առաջարկելով մասնակցել բողոքի ակցիաներին: Եթէ կոնգրէսը համաձայնուի, դա կը նշանակի, որ շարժման պոտենցիալն աճել է: Եթէ չհամաձայնի, կը նշանակի, կոնգրէսը իր խնդիրների շարքում չի տեսնում քաղաքացիական շահի պաշտպանութիւն: Եւ այդ ժամ կոնգրէսը կորցնում է ուժը:

Հայաստանի ներկայիս քաղաքական պայմաններում, երբ պայքարը ընթանում է ոչ թէ գաղափարախօսութիւնների միջեւ՝ լիբերալ, սոցիալիստական կամ որեւէ այլ, այլ իշխանութեան մօտ գտնուող փոքրամասնութեան շահի եւ քաղաքացիական շահի միջեւ, միակ գաղափարը, որը կարող է միաւորել ժողովրդին եւ որը ունի մեծ ներուժ, հանդիսանում է քաղաքացիական շարժումը: Այն այժմ ձեւաւորում է, բայց այդ շարժումը ոչալ ուժ կը լինի, եթէ իր ջանքերը միաւորի արդէն իսկ ձեւաւորուած քաղաքական միաւորների հետ, որոնք հռչակել են քաղաքացիական նպատակներ: Հայաստանում հնարաւոր է միայն քաղաքացիական յեղափոխութիւն:

**ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ**  
«ԼՐԱԳԻՐ»

ՄԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ԱՌԱՍՊԵՆՆԵՐԸ

«Հարակովկասեան ինտեգրացիա. այլընտրանքային մեկնարկ» կայքում հրատարակուել է ադրբեջանցի քաղաքագէտ Ջարդուշտ Ալիզադէի յօդուածը, որտեղ հեղինակը ներկայացնում է իր երկրում տարածուած առասպելները: Առաջին առասպելը, ըստ պարոն Ալիզադէի, պաշտօնականն է. կար մի սեւ կայսրութիւն, որում կար մի սպիտակ հանրապետութիւն, որը ղեկավարում էր Հէյդար Ալիեւը: Վերջինս, չնայած խորհրդային «կազմէ»-ի գնեւերալ-մայր էր, իրականում թաքնուած անկախական էր: Միութեան փլուզումից յետոյ

սուպերօրինապահ հրեշտակները նորից չգան իշխանութեան: Իհարկէ, ոչ միայն մեր երկու ժողովուրդների, այլեւ ցանկացած այլ ժողովրդի դէպքում պարզունակ կամ, աւելի ճիշդ՝ նենգաբար պարզեցուած բանաձեւերը աւելի ընկալելի են եւ ընդունելի, քան մտաւոր ճիգեր պահանջող վերլուծութիւնը: Յիշո՞ւմ էք, Օրուելի մօտ՝ «չորս ոտքը լաւ է, երկուսը վատ», բայց յետոյ՝ երբ «գաղափարախօսներին» յարմար եղաւ՝ «չորս ոտքը լաւ է, իսկ երկուսը՝ աւելի լաւ»: Տարբերութիւնն այն է, որ զարգացած ազգերը դարերի ընթացքում

**Ոչ միայն մեր երկու ժողովուրդների, այլեւ ցանկացած այլ ժողովրդի դէպքում պարզունակ կամ, աւելի ճիշդ՝ նենգաբար պարզեցուած բանաձեւերը աւելի ընկալելի են եւ ընդունելի, քան մտաւոր ճիգեր պահանջող**

իշխանութեան եկաւ դաւաճանների մի խումբ, բայց երբ երկրի ղեկը «ազգովի խնդրելուց» յետոյ կրկին ստանձնեց Ալիեւը, Ադրբեջանը նորից սկսեց բարգաւաճել: Ընդդիմութեան առասպելը հետեւեալն է. կար մի սեւ կայսրութիւն, եւ դրա մէջ ամենասեւ հանրապետութիւնը Ադրբեջանն էր, որը ղեկավարում էր բռնապետ եւ չեկիստ Հէյդար Ալիեւը: Կայսրութեան փլուզումից յետոյ իշխանութեան եկան ազգասէր հերոսները, որոնց նենգաբար գահնկեց արեցին, եւ երկիրն ընկղմուեց կոռուպցիայի եւ յուսահատութեան մէջ:

Յարգարժան գործընկերոջ հրապարակումը դրոշեց ինձ մտածելու մեր՝ հայկական առասպելների մասին: Հայաստանում երկուսի փոխարէն դրանք երեքն են:

Առասպել թիւ 1 (դրան հաւատում է իմ հասակակիցների եւ աւագ սերնդի ներկայացուցիչների մեծ մասը). մենք ապրում էինք մի երկրում, որտեղ ամէն ինչ ծաղկում եւ բարգաւաճում էր, բոլորը կուշտ էին եւ բաւարարուած, եւ յանկարծ արտաքին մուժ ուժերը, Գորբաչովը եւ ՀՀԾ-ն որոշեցին այդ գլոբալական երկիրը քանդել, իշխանութիւնը սկսեց ժողովրդի մասին չմտածել, հայաստանցիներին դարձրեց աղքատ եւ պանդուխտ: Առասպել թիւ 2 (պաշտօնական). Խորհրդային Միութիւնը փլուզուեց, եւ իշխանութեան եկան կեանքից կտրուած, ապաշտոնից եւ կոսմոպոլիտ արկածախնդիրները, որոնք կազմակերպեցին ցրտի-մթի տարիներ եւ անընդհատ ծախում էին Ղարաբաղը: Երբ որոշեցին վերջնականապէս ծախել, ժողովուրդը ոտքի ելաւ եւ նրանց քշեց՝ իշխանութեան բերելով ազգային եւ հայրենասէր ուժերին:

Առասպել թիւ 3 (հաւատում են 90-ականներին իշխանութեան մէջ եղած մարդիկ եւ յեղափոխական պատանիները). Խորհրդային Միութիւնը քանդուեց, եւ իշխանութեան եկան ազգի նուիրեալներն ու հրեշտակները, որոնք ազատագրեցին Ղարաբաղը եւ պետութիւն ստեղծեցին: Բայց յանկարծ 98-ին Ղարաբաղից եկան աւազակապետներ, սկսեցին թալանել եւ ընտրութիւններ կեղծել, եւ այդ ամէնը կը շարունակուի այնքան ժամանակ, մինչեւ վերջիշեալ սուպերժողովրդավար եւ

ստեղծել են մեխանիզմներ, որոնք թոյլ են տալիս լսելի դարձնել ընդունուած առասպելաբանութեան շրջանակներից դուրս գտնուող ձայները, ու թէեւ այդ տեսակէտները չեն կարող գերիշխող դառնալ, դրանք գնահատուած են եւ հեղինակաւոր: Այսինքն՝ «էլիտար» են՝ բառիս սկզբնական, ճիշդ իմաստով:

**ԱՐԱՄ ԱՐԱՀԱՄԵԱՆ**  
«ԱՌԱԻՕՏ»

**ՄԱՍԻՍ**  
**ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ**

ՊԵՏՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
ԳԱԲՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ, ՍԱՅԱԿ  
ԹՈՒԹԵԱՆ, ՅԱՐՈՒԹ ՏԵՐ  
ԴԱԽԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ  
Դեռ. (626) 797-7680 - Ֆաքս.  
(626) 797- 6863 - E-Mail:  
massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party  
of Western USA  
1060 N. Allen Ave. , Pasadena, CA  
91104  
Phone: (626) 797-7680, Fax: (626)  
797-6863, E-Mail:  
massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.

Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԶՐԱՊԱՐԱԿԻՑ ԲԵՐՍԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԾՆԵՐԻՑ ԵՐԵՔՐ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԵԼ ԵՆ



Ոստիկանները բռնի ուժով կը հեռացնեն ընդդիմադիր երիտասարդները Ազատութեան հրապարակէն

Երկուշաբթի ուշ երեկոյեան՝ կէսգիշերին մօտ ձերբակալուել են «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Անի Գէորգեանը, նրա եղբայրը՝ Սարգիս Գէորգեանը եւ Հայ Ազգային կոնգրէսի (ՀԱԿ) ակտիվիստ Դաւիթ Քիրամիջեանը: Նրանք մէկ տասնեակից աւելի քաղաքացիների հետ ոստիկանութեան կենտրոնի բաժին բերման էին ենթարկուել Ազատութեան հրապարակի շրջակայքից, երբ ոստիկանութիւնը ընդդիմադիր ակտիւստներին արգելում էր մտնել հրապարակ:

Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեցին փաստաբաններ Լուսինէ Սահակեանն ու Գիվի Յովհաննիսեանը, որոնք մինչեւ ուշ գիշեր ոստիկանութեան բաժանմունքում էին, Անի Գէորգեանը ձերբակալուել է իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ բռնութիւն գործադրելու կամ դրա սպառնալիքի կասկածանքով՝ Քրէական օրէնսգրքի 316 յօդուածի առաջին մասի յատկանիշներով, իսկ Սարգիս Գէորգեանն ու Դաւիթ Քիրամիջեանը՝ խուլիգանութեան կասկածանքով՝ Քրէական օրէնսգրքի 258 յօդուածի յատկանիշներով:

Միւս բերման ենթարկուածներն ազատ են արձակուել: Երկուշաբթի երեկոյեան Ազատութեան հրապարակից ոստիկանութեան կենտրոնի բաժին բերման էին ենթարկուել Հայ Ազգային կոնգրէսի մօտ 15 ակտիւստներ ու երեք լրագրողներ:

Մինչ այդ Հայ Ազգային կոնգրէսի մօտ 20-25 ակտիւստներ Մաշտոցի պողոտայի կողմից փորձում էին մուտք գործել Ազատութեան հրապարակ: Ոստիկանները, ովքեր նախօրոք մի քանի խմբերով կանգնած էին հրապարակի տանող բոլոր մուտքերի մօտ, շղթայ կազմելով՝ ուղղակի արգելեցին ընդդիմադիրների մուտքը հրապարակ՝ հրելով ու բռնութեամբ մարդկանց հեռացնելով Ազատութեան հրապարակից:

Մայրաքաղաքի փոխստիկապետ Ռոբերտ Մելքոնեանը «Ազատութիւն» ռադիոկայանին այսպիսի բացատրութիւն ներկայացրեց. - «Բայց ինչո՞ւ դան: Այստեղ ստորգետնեայ կայանատեղի կայ: Այսպէս մարդկանց մեծ կուտակումներ չպիտի լինի: Վաղը-միւս օրը դառնալու է միտինգի վայր»:

Հայաստանի Մարդու իրաւունքների պաշտպանը հանդէս եկաւ կոչով՝ ոստիկանութեան մարմիններին հասարակական կարգի եւ հասարակական անվտանգութեան ապահովման պարտականութիւնները կատարելիս խստագոյն պահպանել օրէնքի պահանջները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՕՐԸ



Հայաստանի դեկավարութիւնը Սարգարայատի յուշարձանին մօտ

Մայիսի 28-ին Հայաստանը տօնեց Հանրապետութեան օրը:

Երկրի դեկավարութիւնը՝ Սերժ Սարգսեանի գլխաւորութեան, այցելեց Սարգարայատի յուշահամալիր, մասնակցեց Հանրապետութեան օրուան նուիրուած տօնական միջոցառումներին:

Սարգարայատի ճակատամարտի հերոսների յիշատակը յաւերժացնող յուշակոթողի մօտ Հայաստանի նախագահը եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը ծաղիկապսակներ գետեղեցին, ապա վեհափառ հայրապետը կատարեց աղօթք Մայիսեան հերոսամարտերին զոհուած հայորդիների հոգիների հանգստութեան համար:

Այնուհետեւ յուշահամալիրում տեղի ունեցաւ ժողովրդական տօնախմբութիւն եւ համերգ:

ՍԵՐՃ ՍԱՐԳՍԵԱՆԸ «ԱՅՍ ՊԱՅԻ ԴՐՈՒԹԵԱՄԲ ԼՈՒՐՁՄՐՑԱԿԻՑ ՉՈՒՆԻ»

Հայաստանի հանրապետական կուսակցութիւնը (ՀՀԿ), որը գլխաւորում է Սերժ Սարգսեանը, 2012 թուականի խորհրդարանական ընտրութիւններում կրկին փորձելու է մեծամասնութիւն կազմել Ազգային ժողովում: Իսկ 2013-ի նախագահական ընտրութիւններին կուսակցութեան թեկնածուն, ՀՀԿ-ի փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեանի խօսքով, Սերժ Սարգսեանն է, ով, «այս պահի դրութեամբ լուրջ մրցակից չունի»:

«Դեռ չեմ տեսնում շատ լուրջ մրցակից, որովհետեւ Լեւոն Տէր-Պետրոսեանը առաջուայ Լեւոն Տէր-Պետրոսեանը չէ այլեւս», - նշեց Զոհրաբեանը:

Իսկ Ռոբերտ Քոչարեանը, ըստ Զոհրաբեանի, կարող է մրցակից լինել Սերժ Սարգսեանին, սակայն «նախագահական ընտրութիւնների ժամանակ Քոչարեանը իր թեկնածութիւնը չի դնի»:

«Զեմ կարծում, որ նա պէտք է Սերժ Սարգսեանի դէմ թեկնածութիւնը դնի: Այդպիսի բան չի լինի: Մենք գնում ենք ուժերի միասնականացման, կոնսոլիդացման ճանապարհով: Եւ մեր դիմաց ունենալով Ղարաբաղի մեր ծանր ինդիքը՝ կարծում եմ, որ իրար բարեկամ ուժերը իրար դէմ որ դրեցին, ապա դա քաոսի կը վերածուի», - յաւելեց ՀՀԿ-ի փոխնախագահը:

Հարցին, թէ հնարաւոր է, որ ՀՀԿ-ն Ռոբերտ Քոչարեանին առաջարկի վարչապետի պաշտօնը, Զոհրաբեանը պատասխանեց, թէ իրենք վարչապետի կարիք չունեն:

Մինչ իշխող կուսակցութիւնը պատրաստուած է հերթական խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններին, ընդդիմադիր Հայ Ազգային կոնգրէսը (ՀԱԿ) իշ-



ՀՀԿ-ի փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեան

խանութիւններից պահանջում է գալիք Յուլիսից Սեպտեմբեր ընկած ժամանակահատուածում անցկացնել արտահերթ ընտրութիւններ:

Արձագանքելով ՀԱԿ-ի այս պահանջին՝ Ռազմիկ Զոհրաբեանն ասաց. - «Արտահերթ ընտրութիւններ չեն լինելու: Ժողովրդավարութիւն է՝ ընդդիմութիւնը կարող է ամէն օր, ամէն ժամ պահանջել»:

ՀԱԿ-ի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի մամուլի խօսման Արման Մուսիսեանը, հակադրելով Զոհրաբեանին, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, թէ «քաղաքականութիւնից անգամ տարրական գաղափար ունեցող ցանկացած քաղաքացի հասկանում է, որ այս բարդ իրավիճակից դուրս գալու եւ ձգնաժամը յաղթահարելու միակ ելքը արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններ են»:

Աւելին՝ Մուսիսեանը համոզուած է, որ ընդդիմութեան պահանջը իրականութիւն է դառնալու եւ որեւէ կասկած չունի, որ պիտո համին արտահերթ ընտրութիւնների անցկացման:

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏՆ» ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԱՏԵՂԾԵԼ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Մայիսի 30-ին տեղի է ունեցել «Սարգարայատ» շարժման նախաձեռնութեան «Հայոց պետականութեան հրամայականը» խորագրով առաջին խորհրդաժողովը: Ժողովին մասնակցում էին քաղաքական գործիչներ, մտաւորականներ, արուեստագետներ, երիտասարդներ:

Մտքերի փոխանակման ընթացքում կարեւորուել է նոր որակի առաջնորդող խմբի ստեղծման անհրաժեշտութիւնը: Վերջինս պէտք է խաբիսուած լինի պետականութեան վերականգման գործում հայկենտրոնութեան եւ սոցիալական արդարութեան սկզբունքների վրայ՝ ստեղծելով առողջ քաղաքացիական հասարակութիւն, որն էլ կը դառնայ հզօր եւ միասնական Հայաստանի ստեղծման անհրաժեշտ հիմքը:

«Սարգարայատ» շարժման նախաձեռնած խորհրդաժողովում

նշուել է, որ իշխող հակազգային ու հակապետական ուժերի պայմաններում արդար ընտրութիւնների անցկացումը անհնար է, ուստի անհրաժեշտ է ստեղծել այլ ընտրանքային խորհրդարան: Այն պէտք է ապահովի հայաստանական տրոնութեան սկզբունքին հաւատարիմ մարդկանց եւ ուժերի համագործակցութեան դաշտը, ինչպէս եւ առաւել լայն բազմակարծութիւն եւ քաղաքացիական հասարակութեան բազմազանութեան հնարաւորութիւնը:

Ստեղծուելիք խորհրդարանը հիմք կը հանդիսանայ քաղաքական միջավայրի վերականգնման, քաղաքական ուժերի կայացման, նոր գաղափարների եւ մտայնութիւնների, ծրագրերի եւ միջոցառումների ընդգրկման համար, իբրեւ նոր Հայաստանի կայացման եւ հայկական պետականութեան զարգացման ուղենիշ:

ԼՈՒՐԵՐ

ԵՒԱ ՌԻՎԱՍԱՐ «ԵՒՐԱՏԵՍԻԼ - 2010»-ՈՒՄ ԳՐԱԲԵՑ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԵՂԸ



Եւա Ռիվասը ելոյթ կ'ունենայ «Եւրատեսիլ - 2010» երգի մրցոյթի ընթացքին

Հայաստանը ներկայացնող Եւա Ռիվասը Apricot Stone երգով «Եւրատեսիլ - 2010» երգի մրցոյթում գրաւեց եոթերորդ տեղը:

Եզրափակիչում Ռիվասը հանդէս եկաւ 21-րդը: Ինչպէս եւ երկու օր առաջ կիսաեզրափակիչում՝ երգչուհին բեմ բարձրացաւ անուանի դուդուկահար Ջիվան Գասպարեանի հետ:

Մրցոյթում առաջին տեղը գրաւեց Գերմանիան ներկայացնող 19-ամեայ երգչուհի Լենա Մայեր-Լանդերութը՝ Satellite երգով: Երկրորդ տեղում էր Թուրքիան, երրորդում՝ Ռումինիան, չորրորդում՝ Դանիան, հինգերորդում՝ Ադրբեյջանը եւ վեցերորդում՝ Բելգիան:

Հայաստանին ամփոփիչ աղիւսակում յաջորդում է Յունաստանը, իններորդ տեղում է Վրաստանը, լաւագոյն տասնեակը եզրափակում է Ուկրաինան:

«Եւրատեսիլ - 2010»-ին մասնակցում էր 39 երկիր, որոնցից եզրափակիչ էին անցել 25-ը:

Մի օր առաջ կայացած ասուլիսում Եւա Ռիվասը շեշտել էր, որ եզրափակիչում իրեն դժուարին պայքար է սպասում: «Մրցա-

կիցներս շատ ուժեղ են, եւ եզրափակիչը շատ, շատ դժուարին կը լինի: Իմ կարծիքով՝ այն իսկական ճակատամարտ է լինելու», - ասել էր երգչուհին:

Սա Հայաստանի հինգերորդ մասնակցութիւնն էր «Եւրատեսիլ» երգի մրցոյթին, եւ մինչ այժմ ամենայայնուրոյն արդիւնքը գրանցել է Սիրուշոն՝ 2008 թուականին «Քելէ-քելէ» երգով գրաւելով չորրորդ տեղը: Երկու անգամ Հայաստանը գրաւել էր ութերորդ տեղը, մէկ անգամ՝ տասներորդը:

Ինչպէս եւ նախորդ տարի, այս անգամ եւս մրցոյթի մասնակիցների միաւորները հաշուարկում էին ժիւրիի եւ հեռուստադիտողների քուէարկութեան արդիւնքների 50:50 յարաբերակցութեամբ: Մի շարք երկրներից, որտեղից Հայաստանը մրցոյթին մասնակցութեան առաջին տարիներին շատ բարձր միաւորներ է ստացել, նոր կարգի ներդրումից յետոյ միջին կամ ցածր միաւորներ են ստացում, օրինակ՝ Ֆրանսիայից, Յունաստանից, Կիպրոսից, Բելգիայից, Շուէցարիայից:

տատմանը եւ սահմանի բացմանը: Հայ-կանադական առեւտրատնտեսական յարաբերութիւնների ընդլայնման շուրջ քննարկումների համատեքստում էզուարդ Նալբանդեանը նշել է, որ Հայաստանում գործում են կանադական կապիտալով շուրջ երկու տասնեակ ընկերութիւններ, եւ համատեղ ջանքերով դրանց թիւը կարող է աւելանալ:

Հայաստանի եւ Կանադայի արտգործնախարարները անդրադարձ են կատարել միջազգային կազմակերպութիւնների շրջանակներում համագործակցութեան սերտացման հարցերին, ինչպէս նաեւ Հարաւային Կովկասի տարածաշրջանում անվտանգութեան եւ կայունութեան ամրապնդման խնդիրներին:

ԿԸ ՆՈՒԱԶԻ ԹՈՒՐՔԻԱ ԶԱՆԳԱՏԻ ՄԵԿՆՈՂ ԶԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ԹԻՒԸ

Ջբօսաշրջութեան ոլորտի պատասխանատուներն ակնկալում են, որ այս տարի Հայաստանից Թուրքիա մեկնող զբօսաշրջիկների թիւը կը նուազի՝ «չկարգաւորուած հայթուրքական յարաբերութիւնների պատճառով»:

«Վերջին տարիներին, գիտէք, որ այցելութիւնները [Թուրքիա] գգալի էին, բայց իմ կարծիքն այն է, որ այս փուլում որոշակի զսպող հանգամանք կարող է լինել, եւ այն նոյն աճի տեմպերը, որոնք կային նախորդ տարիներին, այս տարի չի լինի», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց էկոնոմիկայի փոխնախարար Արա Պետրոսեանը:

Թուրքիայի պաշտօնական աղբիւրների համաձայն, տարեկան այդ երկիր մուտք է գործում 50 հազար հայաստանցի: Ընդ որում՝ այցելութիւնների մօտ կէսը բիզնեսի կամ աշխատանքի նպատակով է:

Հայ-թուրքական գործարար յարաբերութիւնների զարգացման խորհրդի մամուլի եւ հասարակայնութեան հետ կապերի համակարգող Ալին Օզինեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հեռախօսազրոյցում կարծիք յայտնեց, թէ այս թուրք «մօտ են իրականութեանը» եւ այդ 50 հազարի մօտ կէսը զբօսաշրջիկներ են:

«Այն մարդիկ, որ ամառները (Հայաստանից) մեկնում են հանգստանալու, գոնէ մէկ անգամ եղել են Թուրքիայում, յատկապէս Անթալիայում: Էժան է դրսից Թուրքիայի հանգստեան գօտում հանգստանալը», - ասաց նա՝ շարունակելով:

«Բացի Հայաստանի քաղաքացիներից, հնարաւոր է նաեւ, որ Ռուսաստանի հայերն էլ են գնում Անթալիա, ու դրանց թիւը հաստատ այդ 50 հազարի մէջ չի նշում»:

Նա չի կարծում, թէ այս տարի Հայաստանից Թուրքական հանգստավայրեր մեկնողները մտահոգուելու պատճառներ ունեն. - «Մարդիկ ուղղակի գնում են հանգստանալու: Ես քանի հոգի գիտեմ, որ բաւականին թշնամական վերաբերմունք ունեն Թուրքիային, բայց հանգստանալը աւանդնացնում են, դրա հետ չեն կապում: Նաեւ խօսակցութիւններ կային, որ [Հայաստանի] պետական պաշտօնեաներին թոյլ չի տրուելու, որ հանգստանան [Թուրքիայում]: Ինչու եմ սա ասում. ես կարծում եմ՝ մարդիկ մէկը միւսի հետ չեն կապում»:

«Տաթեւ» տուրիստական գործակալութեան օպերատոր Արամ Տոնեանի խօսքով, թէեւ հաշուած օրեր են մնացել տուրիստական սեզոնի բացմանը, սակայն նկատուում է որոշակի պասսիւութիւն, ինչի պատճառը, ըստ նրա, այն է, որ «պետական ու կուսակցական որոշ գործիչներ զբաղուած են ծանօթ-բարեկամների շրջանում Անթալիան հակազովազդելով»:

«Պարոն քաղաքական գործիչներ, եթէ դուք գտնում էք, որ մարդը երկու անգամ աւելի շատ փող ծախսի եւ գնա Եւրոպա, թող գնա: Բայց ես միշտ էլ գտել եմ, որ Թուրքիան աւելի յարմար է գնելով, մատուցած ծառայութիւններով, մօտիկութեամբ»:

**ՖՐԱՆՍԱ. ԽԱՉՔԱՐ ՎԵՐՍԱՅԼԻ ՄԵՋ**

Մայիսի 30-ին, Հայ Վեթերաններու Միութեան նախագահ եւ Վերսայի քաղաքապետ Ֆրանսուա Տը Մազիէրի նախաձեռնութեամբ, աշխարհահռչակ երգիչ Շարլ Ազնաւուր բացումը կատարեց Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած խաչքարին: Բացի ատկէ ծաղիկներ դրուեցան նաեւ Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքին զոհուածներու յուշարձանին: Այս առթիւ բացումը կատարուեցաւ նաեւ Ֆրանսայի ազգային հերոս՝ Պատուոյ Լեգէոնի շքանշանակիր Միսաք Մանուշեանին եւ դիմադրութեան շարժման նուիրուած ցուցահանդէսին:

**ԻՐԱԲԱՊԱՇՏՊԱՆՆԵՐՈՒ ԱՅԱԶԱՆԳԸ**

Շարունակուած էջ 1-էն

մով, ցինիզմի հասնող պատճառաբանութիւններով, ոտնահարում է Հայաստանի քաղաքացիները ազատ տեղաշարժի իրաւունքը մայրաքաղաքի մի տարածքում՝ ըստ քաղաքական պատմաբանութեան: Աւելին, փորձելով ստեղծել հասարակական կարգի խախտման պատրանքներ՝ ապօրինաբար ոստիկանութեան բաժանմունքներ բերման են ենթարկում օրէնքի շրջանակներում գործող բողոքի ակցիայի մասնակիցներին ու լուսաբանող լրագրողներին: Կիրառուում են ակնյայտ եւ հրապարակային բռնութիւններ նոյնիսկ կանանց եւ անչափահասների նկատմամբ:

«Նման գործելաճի ակնյայտ դրսեւորում է «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Անի Գէորգեանի, ՀԱԿ-ի ակտիւիստներ Դաւիթ Քիրամիջեանի ու Սարգիս Գէորգեանի՝ 2010 թ. Մայիսի 31-ին ոստիկանութեան բաժին բերման ենթարկուելը եւ մինչ օրս ապօրինի անազատութեան մէջ գտնուելը:

«Այս ամէնը վերստին հաս-

տատում է Հայաստանի իշխանութիւնների կողմից գինուորատուականական մեթոսների կիրառումը՝ ճնշելու ցանկացած այլակարծութեան դրսեւորում»:

Վերջին օրերու դէպքերուն առնչութեամբ Հայաստանի ժողովրդական Կուսակցութեան դեկավար Ստեփան Դեմիրճեան Յունիս 2-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտարարեց. «Մենք չենք ուզում՝ զրոյրգական տարբերակով երկրում իշխանափոխութիւն լինի: Մենք ուզում ենք երկրում ժողովրդավարական ձեւով իշխանափոխութիւն փոխելու աւանդույթ ձեւաւորուի»:

Ներքին կեանքի առողջացման համար որպէս լուծում, Դեմիրճեան առաջարկեց ազատ, արդար եւ թափանցիկ ընտրութիւններու անցկացումը:

«Իշխանութիւնը կարծես գերխնդիր է դարձրել Ազատութեան հրապարակում ընդդիմութեան միջոցառումներն արգելելը: «Դատաւարտում ենք այս գործելաճն ու պահանջում ազատել ձերբակալուածներին», - ըսաւ ՀԺԿ առաջնորդը:



### ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱՅԱԳԵՏ ՄԱՔՍԻՍ ԵՒ ԱԴԵԱՆԻ ՀԵՏ

Օրերս ՀՀ սփիւռքի նախարարութեան հիւրն էր ֆրանսահայ «Սուրսոյ Դ՝Ադմենի» մշակութային միութեան նախագահ Մաքսիմ Եւադեանը: Միութեան 50 անդամները, ովքեր հիմնականում հայեր են, զբաղուած են հայագիտութեան հիմնախնդիրներով: Միութեան նախագահը սիրով պատասխանեց մեզ հետաքրքրող հարցերին:

- Ո՞րտեղից էք արմատներով:  
- Իմ պապերը Յեղասպանութիւն վերապրած մշեցիներ եւ խարբերդիներ են: Իմ ծնողներից շատ էի լսել հայ ժողովրդի մասին: Իմ կարգացած աշխարհի ժողովուրդների պատմութեան առաջին գրքում հայերի եւ Հայաստանի մասին ոչինչ չկար գրուած: Ժամանակ անց կարդացի հայերէն գրքեր, ծանօթացայ հայ ժողովրդի հարուստ պատմութեանը եւ մշակույթին: Համեմատեցի միեւնոյն ժամանակաշրջանը ներկայացնող հայերէն եւ օտար լեզուներով գրքերը, հասկացայ, որ դրանցից մէկում փաստերը ճիշդ չեն ներկայացուած, մտածեցի, որ հայերն են սխալուել: Կարդացի շատ գրքեր, ուսումնասիրեցի տարբեր գրականութիւն ու համոզուեցի, որ սխալուել էին օտարները: Ու իմ առջեւ խնդիր դրեցի՝ փաստերով ապացուցել, որ օտար լեզուներով սպազորուած շատ պատմական փաստեր կեղծուած են, ճիշդ չեն ներկայացուած, եւ իսկապէս հայերն աշխարհի հնագոյն ժողովուրդներից են ու շատ ազգերի պատմութիւնները խաչուած են հայ ժողովրդի պատմութեան ու մշակույթի հետ:

- «Սուրսոյ Դ՝Ադմենի» մշակութային միութիւնը Ֆրանսիայում գործող յայտնի հայագիտական կառոյց է, Հայրենիքից դուրս ելիմնել ցամաք կենտրոն եւ նուիրուել այդ աշխատանքներին, յաղթահարել դժուարութիւնները, կարծում եմ առանց ցեղային միջամտումից:

- Մարդը ուժեղ է իր արմատներով, երբ դու գգում ես դրանց ամբողջութիւնը, այն քեզ վստահութիւն է տալիս: Հայերը շատ բան են տուել աշխարհին, մենք պէտք է շատ ազգերի ապացուցենք, որ իրենց քաղաքակրթութիւնները ինչ-որ ձեւով խաչուած են Հայաստանում, որ իրենց երկրների պատմութիւնն այս քարաստանի հետ ինչ որ ձեւով առնչուած է, իրենց մշակույթների ակունքները փնտռելիս, գան Հայաստան:

Մեր նպատակն է վերաարժեւորել հայ մշակույթը՝ աղբիւրագիտական ուսումնասիրութիւններ կատարել, գրքեր հրատարակել, մշակութային ուղեւորութիւններ կազմակերպել: Արդէն սպազորել ենք թուով 14 աշխատութիւն, որոնցից երկուսը՝ «Հաւատարիմ ծառաներ» եւ «Սուրբ Գրիգոր Լուսաւորչի գործը» գրքերը, հրատարակել ենք վերջերս: Տարին մօտ երկու անգամ հայագէտների, տարբեր ազգութեամբ գիտնականների խմբեր ենք բերում Հայաստան, ծանօթացնում մեր մշակույթին ու մեր ժողովրդին:

- Ինչպէ՞ս էք գնահատում հայագիտութեան արդի վիճակը, որո՞նք են այս ոլորտի հիմնախնդիրները:

- Հայագիտական կենտրոնների աշխատանքները համակարգուած չեն, չունենք մշակուած

կոնկրետ ուղղակիութիւն, մեր կառուցը մշակել է առաջիկայ տարիների համար հայագիտութեան զարգացման ուղղակիութեան ծրագիր, ակնկալում ենք, որ այն կը կիրառուի եւրոպական երկրների հայագիտական կենտրոններում:

Հայագիտական կենտրոններից շատերն այսօր ուսումնասիրում են Յեղասպանութիւն, համոզուած եմ, որ նրանցից շատերը չեն համագործակցում միմեանց հետ: Բացի Յեղասպանութիւնից, նոյնքան օրհասական են հայ ժողովրդի պատմութեան վերաբերեալ աղբիւրագիտական ուսումնասիրութիւնները:

Միւս խնդիրը, որը ես շատ եմ կարեւորում, այն է, որ Հայաստանում հայագէտների համար դժուար է գտնել այլ երկրներից հայ ժողովրդի պատմութեան վերաբերեալ աղբիւրագիտական փաստաթղթեր: Սա հայ մշակույթի զարգացման ուղղութեամբ լուրջ դժուարութիւն է ստեղծում: Իմ մեծ երազն է Հայ ժողովրդին եւ հայ մշակույթին աշխարհին ներկայացնել այնպէս, ինչպէս այն իրականում եղել է: Այս երազը իրականացնելու համար պէտք է Հայաստանից դուրս, հայերի վերաբերեալ փաստաթղթերի լայնածաւալ հաւաքագրում կատարել, այնուհետեւ խորութեամբ ուսումնասիրել:

- Այս ուղղութեամբ ի՞նչ աշխատանքներ եք իրականացնում?

- Այն, ինչի մասին խօսում եմ, արդէն 10 տարի է դրանով ենք զբաղուած: Հայերի մասին 15 լեզուներով տեղեկութիւններ են հաւաքել՝ Իսլանդիայից, Եթովպիայից, Աֆրիկեան վեց պետութիւններից, Հնդկաստանից, Չինաստանից եւ այլ երկրներից:

Անդադար ճամբորդում եմ, օգտագործում եմ անձնական եւ այլ կապեր, գտնում եմ նորանոր ձեռագրեր, լուսանկարում եւ թուայնացնում:

Ես խնդիր եմ համարում նաեւ այն, որ շատ հայագէտներ ուսումնասիրում են Հայաստանից դուրս եղած հայերի վերաբերեալ աղբիւրները, իսկ Հայաստանում եղած ձեռագրերի հետ ծանօթանալու հնարաւորութիւն չունեն: Ես ինքս տարին երկու անգամ այցելում եմ Հայաստան, ուսումնասիրում եմ տարբեր ձեռագրեր, բայց դա շատ կարճ ժամանակահատուած է լուրջ, ծանրակշիռ աշխատանքներ կատարելիս, ես մտածում եմ, գոնէ մէկ տարի աշխատել Հայաստանում: Համոզուած եմ աշխարհի շատ հայագէտներ Հայաստանում աշխատելու հնարաւորութիւն չունեն:

20 տարի առաջ հնարաւոր էր հայագիտութեան ոլորտում այս ծաւալի աշխատանքներ իրականացնել: Բարեբախտաբար, այսօր բարձր տեխնոլոգիաների կիրառման ժամանակաշրջանում բարենպաստ է հայագիտական աղբիւրների ուսումնասիրման եւ հայագիտութեան զարգացման համար: Ես կապեր ունեմ աշխարհի շատ երկրներում, օրինակ վերջերս Գերմանիայից, Իտալիայից ինձ շատ արժէքաւոր ձեռագրեր են ուղարկել: Այսինքն, առանց առանձնակի մեծ ջանքերի ես այն ձեռք եմ բերել:

- ՀՀ Սփիւռքի նախարարութեանը Հայաստան-Սփիւռք գործակցութեան շրջանակներում հա-

### ՄՍՈԿՅՈՒՄՈՒՄ ԱՆՑ Է ԿԱՅՈՒԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍԵՄԻՆԱՐ

Մայիսի 31-ին Ստոկհոլմում կայացել է Միջազգային իրաւունքի ասոցիացիայի շուկայական մասնաճիւղի կազմակերպած սեմինարը «Յեղասպանութիւն Օսմանեան կայսրութիւնում 1915 թուականին. կենդանի պատմութիւն, իրաւական խնդիրներ, վաղեմութեան իրաւունք եւ պատասխանատուութիւն» խորագրով:

Սեմինարը նախագահել է Միջազգային իրաւունքի փորձագէտ եւ Շուէդիայի Միջազգային իրաւունքի ասոցիացիայի նախագահ Օվե Բրինգը: Միջոցառմանը մասնակցել է եւ ելույթով հանդէս եկել Շուէդիայում Հայաստանի դեսպան Արա Այվազեանը, Դուբայի համալսարանի Միջազգային իրաւունքի պրոֆեսոր Կաջ Հոբերը եւ պատմաբան ու Armenica.org կայքի գլխաւոր խմբագիր Վահագն Աւետեանը, ինչպէս նաեւ՝ շուրջ 50 մասնակիցներ, ներառեալ Շուէդիայի արտաքին քաղաքական գերատեսչութեան ներկայացուցիչներ, Շուէդիայի Մարդու իրաւունքների ասոցիացիայի անդամներ, գիտնականներ, ինչպէս նաեւ՝ հայկական, թուրքական եւ ասորական համայնքների ներկայացուցիչներ:

Դեսպան Այվազեանը, ներկայացնելով Յեղասպանութեան պատմութիւնը, անդրադարձել է նաեւ

հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացին եւ ցիւրիխեան արձանագրութիւններին, դրանց վաւերացման կասեցման պատճառներին:

Պրոֆեսոր Հոբերը հակիրճ ներկայացրել է միջազգային իրաւունքում վաղեմութեան վերաբերեալ իր ուսումնասիրութիւնները: Բացատրելով, որ շատ բարդ կը լինի կանխատեսել Հայոց ջեղասպանութեան վերաբերեալ տեսական նախադէպի հաւանականութիւնը կամ արդիւնքը՝ պրոֆեսորը մատնանշել է, որ ելնելով իրաւագրութիւնների բնույթից, այդ հարցը կարող է հետագայ քննութեան համար ներկայացուել միջազգային դատական կառույցներ, օրինակ՝ Միջազգային քրէական դատարան:

Վահագն Աւետեանը ելույթը նուիրուած է եղել պետական ինքնութեանը, իրաւաւորութեանը եւ պատասխանատուութեանը: Նրա ներկայացմամբ կան իսլամիստ հիմքեր թուրքիայի Հանրապետութեան ժխտողական քաղաքականութիւնը տանելու դէպի հաւանական լիբերալ պատասխանատուութեան, որով նախատեսուած է նաեւ Յեղասպանութեան պաշտօնական ճանաչում թուրքիայի կողմից:

մոգուեն, որ հայկական մշակույթը ունի վերապահ մշակույթ է: Այս հարցում ՀՀ Սփիւռքի նախարարութեան դերն անչափ մեծ է: Ինձ ուրախացնում է նախարարութեան որդեգրած հայագիտական կենտրոնների հիմնախնդիրների բացառապատասխան քաղաքականութիւնը: Նախարարութիւնը պէտք է Սփիւռքի համար հրատարակի Հայաստանի վերաբերեալ ուսումնական, գիտահանրամատչելի տարբեր գրքեր, պատրաստի ֆիլմեր, համատեղ տարբեր ծրագրեր մշակի եւ իրականացնի: Ես յաճախ եմ ճաշում կորսուած հայերի հետ, նրանց պատմում եմ հայերի եւ Հայաստանի մասին, հետաքրքրութիւն առաջացնում իրենց հայրենիքի հանդէպ, այս ճանապարհով նոյնպէս փորձում եմ հայապահ-

Շաբ.ը էջ 16

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

# ԱՅԱԶԱՆԳ

Ծանօթ. Արձակագիր, բանաստեղծ Սամուել Օվասաբեան ծնած է Թեհրան 1941-ին: Իր ուսումը ստացած է մայր հայրենիքի մէջ, ուր աւարտած է Փոլի Թեխնիկ համալսարանը: 1971-էն առի՞ն բնակութիւն հաստատած է Պերլինի մէջ: Հեղինակ է գերմաներէնով գրած պատմա-ուսման երկու գիրքերու. «Պերլինեան Թաֆի վարորդի մը օրագիրը» եւ «Գեորգ Ա. Յոսեփ»: Ան, նաեւ դերեր վերցուցած է շարք մը տեսաժապատմաններու մէջ, ինչպէս, Տոն Աշգարեանի բեմադրած ժապատման մէջ, Կոմիտասի դերով: Հայրենի առօրեայ տաղանակներով տուայտող գրողը ստորագրած է ներկայ յօդուածը, որուն շահեկանութեան համար կը ներկայացնենք մեր ընթերցողներուն:

ԽՄԲ.

## ՍԱՄՈՒԷԼ ՅՈՎԱՍԱՅԵԱՆ

Ահազանգ:

Կամ, եկէք մի պահ մոռանանք

ցեղասպանութիւնը

Վերջին ամիսներին համայն հայութիւնը ինքնագոհութեամբ

տարուած նշում է սփռուքահայութեան գրանցած իբր թէ ազգային

որոշ յաղթանակներ, առաջինը ԱՄՆ-ի Գոնկրէսի Ներկայացուցիչ-

ների Պալատի, Արտաքին Յարաբերութիւնների Յանձնաժողովի

կողմից հայութեան դէմ կատարուած ցեղասպանութեան ճանաչում

ման մասին բանաձեւի ընդունումն է: Երկրորդը՝ Շուէդիայի խորհրդարանում

ցեղասպանութիւնը հենց ցեղասպանութիւն կոչելու որոշումն է: Ինչ խօսք դրանք արժանի են

ուշադրութեան, միայն այդ, ոչ աւելին, որովհետեւ այսօր հայութեան

կեանքում տեղատուութիւնները, պարտութիւնները այնքան

ահաւոր են, որ այդ յաղթանակների կշիռը ոչինչ է դրանց հետ

համեմատած եւ ցաւը այն է որ հայութիւնը ինքնագոհութեամբ

տարուած հեշտութեամբ մոռացութեան է մատնում դրանց, չտեսնելու է

տալիս եւ վախենում է խոստովանել ճշմարտութիւնը, որովհետեւ

դրանք իսկապէս որ ահաւոր են, գերհզօր եւ հայ ժողովուրդը այլ

եւէ չի տեսնում, քան անտեսել դրանց: Ըստ Շահան Շահնուրի, նա

նահանջել է, նահանջում է դրանց դէմ, քանի որ այլ քայլ ի վիճակի չէ

անելու, իսկ դա ճակատագրական է ներկայ սերնդի եւ ճակատագրական է

լինելու գալիք սերունդների համար: Այստեղ տեղին է լինել Շահնուրի ժամանակին

հնչեցրած հասցանգը՝ «Նահանջը, նահանջը հայերուն: Կուրը սրբազան

բան է, ճակատամարտը երբեմն նոյնիսկ օգտակար. անոնցմէ ազգ

մը դուրս կու գայ պարտուած, կամ յաղթական, սակայն երկու պարագային

ալ դուրս կու գայ: Բայց նահանջը հոգիներու, գլխի պտոյտ տուող

գառիթափին վրայ սա նահանջը, կը ջնջէ, կը ձուլէ, կ'անհետացնէ

Այսօր հայութիւնը, մանաւանդ սփռուքահայութիւնը, չափազանց շատ է

կարեւորում ցեղասպանութեան միջազգային ճանաչումը,

այն դարձրել է իր «նախասիրութիւնը», ինչպէս տարիներ

առաջ դիպուկ նկատել է մի գերմանական թերթ: Շատերի համար

ցեղասպանութեան հարցով զբաղուելը դարձել է ինքնանպատակ,

ինքնութեան դրսեւորում, իսկ որոշները այն շաղկապելով

հայ դատի եւ պահանջատիրութեան հետ, աչքաթող են

անում իրականութիւնը, իրագործելին, իրական քաղաքականութիւնը:

Որոնցից մէկը նաեւ Արա Պապեանն է, ով ցանկանում է միջազգային

իրականքներից ելնելով, Սեւրի դաշնագրի ճանաչումը

պահանջել:

Եկէք ռեալ հողի վրայ մնանք, մենք ինչպէ՞ս ենք ուզում Թուրքիային

պահանջ ներկայացնել, երբ մենք Արցախի փայլուն յաղթանակից

յետոյ ազգովի պարտութեան եւ նահանջի «գառիթափի»

վրայ ենք գտնուում, երբ մենք մեր իրագործելի

եւ հնարաւոր տնային աշխատանքը չենք կատարել,

երբ զլացել ենք պատմութեան մէջ հազուագիւտ

մեզ ընձեռած բարեպատեհ առիթը օգտագործել,

այն է՝ չենք կարողացել վերաբնակեցնել ազատագրուած

Արցախը, երբ չենք կարողացել այնտեղ, ինչպէս

նաեւ Հայաստանում, այնպիսի տնտեսական, հասարակական

եւ քաղաքական տանելի պայմաններ ստեղծել, որ տեղի

բնակչութիւնը կարողանայ, գոնէ տանելի

կեանք վարել:

Անշուշտ մենք իրաւունք չունենք ոչ մի վայրկեան

մոռանալ Յեղասպանութիւնը, հայ դատը եւ հայութեան

պանուծը, վերաբնակեցումը, միացեալ երկրի

գարգացումը եւ ուժեղ տնտեսութիւնը:

Եկէք մի պահ իրատես լինենք եւ նայենք

իրական կացութեանը եւ համեմատենք Հայաստանի

ու Արցախի բնակչութեան աճը հարեւան երկրների

բնակչութեան աճի հետ: Երեսուն տարի առաջ

հարեւան երկրներում՝ Իրանում, Թուրքիայում եւ

Ատրպէյճանում բնակչուծ էին ներկայիս

բնակչութեան համարեա կէսը, իսկ Հայաստանում եւ Արցախում

բացի այն, որ աճ չի գրանցուել, այլ բնակչութիւնը

նուազել է: Ըստ հաւաստի լուրերի այսօր Լաչինի

շրջանում եւ Շուշուում աւելի քիչ հայ է ապրում,

քան 20 տարի առաջ: Սրանք նշանակում են՝

ամէնից առաջ, համայն հայութեան պարտութիւնը:

տեղի իշխանութիւնների անտարբերութեան,

անգործունէութեան եւ չարաչառութեան, ինչպէս

նաեւ միայն սեփական իշխանութիւնը

ամբարշտելու պայմանների առկայութիւն:

Այդ այն դէպքում՝ երբ թէ Հայաստանում եւ թէ

Արցախում բնակչութեան մեծ մասը աղքատութեան,

անելանելիութեան մեծ մասնաւորութեան

գիրկին է մատնուած: երբ գործազրկութիւնը եւ

արտահոսքը աննախադէպ չափերի են հասել:

Երբ 22 տարի երկրաշարժից յետոյ էլ դեռ

այդ շրջաններում շատ բազմաթիւ ընտանիքներ

թիթեղեայ տնակներում են ապրում: երբ այդ

շրջանում որոշ ընտանիքներ կարիքն ունեն

մի բուռ բրինձի եւ որ մայրերը կարիքից

եւ ինչու իրենց երեխաների ներկայութեամբ

մարմնավաճառութիւն են անում եւ շատ երեխաներ

որբանոց են ընկել, քանի որ հայրերը լքել են

նաց երկիր: Հայ ժողովրդի ճանապարհը միշտ էլ

բարեբարոտ է եղել, միշտ էլ Հայաստանում

այնպիսի պայմաններ են եղել, բացի սովետական

շրջանում, բնակչութիւնը այլ եւէ չի գտել, քան

լքել իր տուն տեղը, այսօր էլ նոյնն է, բայց

այսօր ամենամեծ ցաւը եւ դժբախտութիւնը

այն է, որ եթէ անցյալում այն հայ ժողովրդի

թշնամիների, նրանց ստեղծած հակահայ պայմանների

եւ քաղաքականութեան շնորհիւ էր, ապա

այսօր հայկական չինովնիկներն են, որ

նրա ճանապարհը անանցանելի են դարձնում:

Բաւական է չլինել, որ Հայաստանի իշխանութիւնները

հենց սկզբից, Լեւոն Տէր Պետրոսեանից մինչ այսօրուայ

իշխանութիւնները չեն կարողացել, աւելի ճիշտ

կը լինի ասել, չեն ցանկացել, բարեպատեհ առթիւ

առաւելագոյն օգտագործել հայկական պետականութեան

ամբարշտումն համար եւ ստեղծել տնտեսապէս

եւ քաղաքականապէս դեմոկրատիայի ուղին

բռնած այնպիսի կայուն եւ զարգացած երկիր, որ

հայ կանայք ոչ թէ թողնէին իրենց հայրենիքը

եւ Թուրքիայում աշխատանք որոնելու գնային,

այլ կատարուէր հակառակը, սփռուքահայը

գնար Հայաստան եւ Արցախը բնակուելու

եւ աշխատելու համար: Մենք այսօր Թուրքիայից

եւ համայն աշխարհից պահանջում ենք հայ

ժողովրդի դէմ կատարուած Յեղասպանութեան

ճանաչումը. իսկ ո՞վ է պատասխանատու այն

Յեղասպանութեան համար, որ կատարուելու

ու կատարուած է մեր օրերում, հայրենի իշխանութիւնների

կողմից: Հարցը պարզաբանէ՞ք՝ Ըստ Միացիալ

Ազգերի կոնվենցիայի, գենոցիդ նշանակում է

Շարք էջ 18



Authorized Agent  
**Blue Shield of California**  
An Independent Member of the Blue Shield Association



**A.B.A. INSURANCE SERVICES**

**SERVING SINCE 1975**

**BEDROS S. MARONIAN**

**(818) 500-9585**  
**CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com**

**FAX 500-9308** ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐՐԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



# ՀԻՄԱ 1920 ԹՈՒԱԿԱՆԸ ՉԷ

ՄԱՆՈՒԷԼ ՍԱՐԳՍԵԱՆ  
«ԼՐԱԳԻՐ»

Երբ Ռուսաստանը եւ Թուրքիան չափազանց իրենց չարաբերութիւնները ռազմավարական մակարդակի բարձրացնելու մասին, Հայաստանում յաճախակիացան խօսակցութիւնները անվտանգութեան նոր սպառնալիքների մասին: Շատերը նշում են ռուս-թրքական «բարեկամութեան» պատմականօրէն ապացուցուած դեստրուկտիւ բնոյթը Հայաստանի ճակատագրի համար: Քաղաքական գործիչներն ու քաղաքագետները կանխատեսումներ են անում, թէ արդեօք Ռուսաստանը «կը ծախի» Հայաստանի շահը Թուրքիայի հետ ներկայիս գործարքում: Խնդրի միւս կողմը՝ որ Հայաստանի վրայ ռուս-թրքական յարաբերութեան ազդեցութեան բնոյթը կարող է կախուած լինել առաջին հերթին հենց Հայաստանի գործողութիւններից, կարծես թէ չի քննարկուած: Յաճախ նոյնիսկ պնդումներ են լինում, թէ Հայաստանն աւելի ու աւելի է հեռանում սեփական ճակատագրի վրայ ազդելու հնարաւորութիւնից:

Ղարաբաղի խնդիրը եւ այդ խնդրի լուծմանը մասնակցելու Թուրքիայի աճող յաւակնութիւնները հաշուի առնելով, վերը նշուած «գաղափարական տուայտանքները» ձեռք են բերում ճակատագրական իմաստ: Շատերն անալոգիայով սկսում են նկարել Կարսի պայմանագրի ժամանակների նոր

քաղաքական քարտէզը: Համարուում է, որ Հայաստանը կանգնած է անխուսափելի նոր գործարքների առջեւ: Հայաստանի շուրջ ձեւաւորուող նոր իրավիճակի վերաբերեալ համոզիչ գնահատականներ չկան: Իշխանութիւնը մեծ մասամբ լուռ է, ինչն աւելի է ուժեղացնում տագնապը:

Այս խնդիրների շուրջ կարծիք յայտնելու համար դիմել ենք ՌԱՀՀԿ փորձագետ Մանուէլ Սարգսեանին:

Ռուս-թրքական մերձեցումից դրական սպասելիքների պատմական օրինակներ հայ քաղաքական էլիտան իսկապէս չունի: Անալոգներով տեղի ունեցողը գնահատելու սովորութիւնը չի կարող տալնապալի գագացումներ չառաջացնել: Սակայն չարժէ այդ կերպ մօտենալ խնդրին՝ մենք ապրում ենք նոր աշխարհում եւ նոր պայմաններում: Աւելի օգտակար կը լինէր վերանայել սեփական հայեացքները քաղաքական աշխարհի տրամաբանութեան վերաբերեալ, ասել է Մանուէլ Սարգսեանը:

Նրա կարծիքով, մեր տարածաշրջանում Ռուսաստանի գործողութիւններին պէտք է առանձնաշատուկ ուշադրութեամբ հետեւել: Նրա սովորութիւնը՝ Հայաստանի «հովանաւորի» դեր խաղալը, առայժմ չի փոխուել: Լիովին չի վերացել նաեւ հայկական սովորութիւնը՝ Ռուսաստանը որպէս հովանաւոր դիտարկելը: Հայաստանի հանդէպ Թուրքիայի չղաղարող թշնամանքը խթանում է այդ սովոր

ութիւնը: Շատերն են ուզում կովկասում տեսնել «միշտ ուժեղ Ռուսաստան», որպէս փրկիչ: Սակայն, ոչ պակաս ապակառուցողական է նաեւ ուժեղացող տեսակէտը, ըստ որի Ռուսաստանը Հայաստանի չարիքի աղբիւրն է:

Մանուէլ Սարգսեանը նշել է, որ այս մօտեցումները ոչ մի ընդհանուր բան չունեն իրական քաղաքականութեան հետ: Պետութիւնների յարաբերութիւններում միշտ լուրջ ռեսուրսներ կան սեփական շահերը պաշտպանելու համար: Սակայն անհրաժեշտ է յենուել շահերի, եւ ոչ թէ հնարուած քաղաքական կերպարների վրայ: Շատ հայերի յատուկ է նոյնացնել Հայաստանի ու Ռուսաստանի շահը: Ընդ որում, այդ երկրի կայսերական (էքսպանսիոնիստական) քաղաքականութեան շահերի հետ: Համարուում է, որ Հայաստանը կարելոր գործօն է հենց այդպիսի քաղաքականութեան ձեւաւորման համար: Ռուսական քաղաքականութեան կայսերական վեկտորի թուլացումը դիտարկուած է որպէս սպառնալիք Հայաստանի համար: Այդ պատճառով էլ հայերը միշտ «ուժեղ» Ռուսաստանի կողմն են, ասում է փորձագետը:

Հայաստանի անվտանգութեան համակարգում Ռուսաստանի գործօնի նման ընկալումը Մանուէլ Սարգսեանը համարում է արատաւոր: Իրականում, հայկական գործօնի արժէքը Ռուսաստանն զգում է իր թուլանալու ժամանակաշրջանում: Նման ժամանակաշրջաններում Ռուսաստանը ստիպուած է ուժեղացնել Հայաստանը որպէս

թրքական էքսպանսիան զսպող գործօն: Մասնաւորապէս, նման ժամանակաշրջան է ԽՍՀՄ փլուզումից մինչեւ մեր օրերը: Եւ հակառակը, Ռուսաստանի քաղաքականութեան էքսպանսիոնիստական վեկտորի ուժեղացումը միշտ յանգեցրել է Հայաստանի թիկունքում Թուրքիայի ու Ատրպէյջանի հետ գործարքների: Հրաշամ օրինակ է 1918-23 թուականները. Ռուսաստանի բարեկամութիւնն իր հարաւային հարեւանների հետ թանկ նստեց Հայաստանի վրայ, նշել է Մանուէլ Սարգսեանը:

Պէտք է նշել, որ ռուս-թրքական ներկայիս յարաբերութիւնն արտայայտուած է միջազգային սկզբունքօրէն նոր իրավիճակում: Ներկայում Ռուսաստանի որոշ ուժեղացումը կապուած է ոչ թէ սեփական պոտենցիալի (հակառակը, Ռուսաստանը թույլ է ինչպէս երբեք), այլ այն դերի հետ, որ Ռուսաստանը ձեռք է բերել Արեւմուտքի հետ յարաբերութիւնները սերտացնելու կապակցութեամբ: ԱՄՆ կողմից Ռուսաստանին առաջարկուած վերաբեռնման քաղաքականութիւնը կտրուկ փոխել է ուժերի դասաւորութիւնն աշխարհում: Ակնյայտ է, որ Ռուսաստանին առաջարկուել է ինքնուրոյն կարգաւորել գործընթացներն իր սահմանների երկայնքով: 15 տարի ի վեր գործող Ռուսաստանին «հակակշիռ գօտին»՝ ի դէմս Ուքրանիայի ու Վրաստանի, կորցրել է իր արժէքը ԱՄՆ եւ Արեւմտեան Եւրոպայի համար: Հակառակը, Ռու-

Շարք էջ 18

## Հ.Բ.Ը.Մ. Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարան

### AGBU Vatche and Tamar Manoukian High School

Նոր Աշակերտներու Արձանագրութիւն, 9րդ-12րդ Դասարաններ  
*New Student Enrollment, Grades: 9-12*

✓ College Preparatory Academic Program	✓ Comprehensive Armenian Curriculum
✓ Honors or Advance Placement (AP) Level Instruction in all subject areas	✓ Technology and Computer Program
✓ Small Class Sizes and Individual Attention	✓ College Counseling and Admissions Guidance
✓ Visual Performing Arts Program in Dance, Drama, Theater, Music and Choir	✓ Co-curricular and Extra-Curricular Activities including Competitive Sports
	✓ Safe and Secure Closed Campus

Կրթաթոշակներ տրամադրելի են այն աշակերտներուն, որոնք ուսումնական բացառիկ յաջողութիւն ցուցաբերած են, ինչպէս նաեւ գերազանց ընդունակութիւն ունին հետեւեալ մարզերէն ներս. -

Հայագիտութիւն - «Technology» - Երաժշտութիւն - Թատրոն - Պարարուեստ

Ձեր Ջաւակներուն Համար Կատարեցէք Լաւագոյն Ընտրութիւնը

Ուսում, Կրթութիւն, Յաջողութիւն

Call: (626) 794-0363  
 We are located at 2495 E. Mountain St, Pasadena, CA 91104

### ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ՓԱՍԱՍՏԻՆԱՅԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ ՅԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԱՆԴԻՍԱՍՐԱՅԻՆ ՄԵԶ

Մայիս 20ի երեկոյան փաստափրնայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Արանց Միութիւնը (Men's Forum) յատուկ երեկոյթ մը կազմակերպած էր լսելու համար գաղութիս ծանօթ ազգայիններէն Յարութ Սասունեանի ելոյթը իր անցեալին ու ներկայիս կատարած հայանպաստ գործերու մասին: Ներկայ էին հարիւրի մօտ անձինք այլեւայլ կազմակերպութիւններէ:

Սեղաններուն օրհնութիւնը կատարեց հիւրընկալ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քհնյ. Փեթոյեան:

Պրն. Սասունեան, որ փոխ նախագահներէն մին է Լինսի շիմնադրամի Կեդրոնական Վարչութեան, խօսեցաւ 1988 թուի մեծ երկրաշարժէն սկսեալ տարիներ շարունակ կատարուած մարդասիրական հսկայ օգնութեան մասին, անդրադառնալով նաեւ Հայաստանի մէջ կառուցուած պողոտաներու, դպրոցներու եւ ա՛յլ հաստատութեանց, որոնք բոլորն ալ Լինսի շիմնադրամէն յատկացուեցան:

Հարց ու պատասխանի ժամուն ներկաները հարցուցին նաեւ Հայաստանի եւ Թուրքիոյ վերաբերեալ քաղաքական եւ դիւանագիտական յարաբերութեանց մասին, որոնց Պրն. Սասունեան տուաւ հանգամանալից պատասխաններ: Առ ի գիտութիւն, Պրն. Սասունեան խմբագիրն է անգլիատառ հայերէն "The Armenian Courier" շաբաթաթերթին:

Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ ելոյթի ընթացքին խօսք առաւ Դոկտ. Արժ. Տ. Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեան՝ բարձրօրէն գնահատելով Պրն. Սասունեանին ներդրումը այլազան բարեսիրական իրագործումներու առնչութեամբ: Ապա «Պահպանիչ» օրհնութեան աղօթքով փակեց երեկոյի յայտագիրը:

### ՍԱՆ ՏԻԷԿՈՅԻ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ՅԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅՅՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ



Սան Տիէկոյի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ ՅՅրդ Տարեդարձի ուրախ առիթով, Կիրակի, Մայիս 23ին Սրբազան Հայրը Սուրբ Պատարագ մատուցեց եւ քարոզեց: Սուրբ Սեղանին սպասարկեցին Ծուխին Հոգեւոր Հովիւր՝ Արժ. Տ. Տաթեւ Աւագ Քհնյ. Թաթուլեան, Սարկաւազները եւ Քահանայութեան Թեկնածու՝ Բրշ. Յովնան Սրկ. Վարդանեան, որ ընկերակցած էր Սրբազան Հօր:

Թեամբ իսկ կը սկսին խօսիլ տարբեր լեզուներով: Որոնք էին այդ լեզուները, եթէ ոչ հաւատքի վկայութիւնը, յոյսին եռանդով լեցուն խօսքը, սիրոյ վարդապետութեան ոգին, քրիստոսակերպ կեանքին հաղորդութեան հրաւերը, մարդուն մէջ Աստուծոյ պատկերը ունեցած ըլլալուն գիտակցութիւնը եւ տակաւին այն բոլոր շնորհներուն յիշեցումը սուտղ խօսքերը, որոնց ամբողջութիւնը կ'արտայայտուի Քրիստոսի Աւետարանի էջերուն ընդմէջէն:

Անցեալ շաբաթ Փրակայի մէջ տեղի ունեցած է Հ.Բ.Լ.Մ.ի «Վերթուալ Գոլէճ» տնօրէն Երուանդ Զօրեանի հանդիպումը տեղուցն հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ: Եւրոպական «Օրեր» ամսագրին համաձայն Պրն. Զօրեան ներկայներուն ծանօթացուցած է գոլէճի աշխատանքներուն եւ չեխահայութեան այդ ծրագրին մասնակցելու հնարաւորութիւնները: Հանդիպման ընթացքին պայմանաւորուած են առաւել աշխուժ համագործակցութիւն ունենալ Հ.Բ.Լ.Մ.ի կրթական ծրագիրներուն ծիրէն ներս:

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՉՆՉԱՑԻՈՒՄԷ Եկեղեցին որպես աղբանոց ու գոմաղբի պահոց

## ՎԵՐԱՍԱՀԱԿՆԱՆ

Մեր հարեւան երկրում՝ Թուրքիայում, օր օրի աւելանում է անմարդկային վերաբերմունքը մշակութային կոթողների հանդէպ: Ներկայումս Արեւմտեան Հայաստանում կառուցուած հազարամեակների պատմութիւն ունեցող եկեղեցիներից հատուկեմ մասունքներն են միայն կարողացել դիմակայել թրքական վայրագութիւններին: Այս երկրում եկեղեցիներն ու մշակութային մի շարք կոթողներ աւերուեցին Թուրքերի ձեռքով, ովքեր խաղաղ պայմաններում սրբատեղիները օգտագործեցին իբրեւ ռազմական վարժութիւնների թիրախ, քանդուեցին, ռմբակոծուեցին ու թալանուեցին հազարաւոր եկեղեցիներ, որոնց մասին քաղաքակիրթ հասարակութիւնը լռեց:...

Այսօր մէկ-երկու յայտնի եկեղեցի են վերանորոգում իրենց շահութի համար, իսկ մնացեալ կառուցները շարունակում են մնալ նոյն անմխիթար վիճակում, որոնց սպառնում է քանդուելու ու ոչնչացուելու վտանգը: Միայն եթէ վերջնէն վերջին մէկ-երկու ամիսները, պէտք է ասեմ, որ թրքական մի շարք քիչ թէ շատ առաջադէմ կազմեր ու թերթեր բարձրացրեցին մի քանի մշակութային կոթողների հարց, որոնք թրքական կամայականութիւնների հերթական գոհերից էին:

Մէկը քանդում են, միւսը վերածում անսանագոմի, երրորդի պատմութիւնը խեղում՝ հայկական

նը վրացացնում ու թրքացնում, մէկ այլ եկեղեցի թաքցնում: Պայթեցուեց 2000-ամեայ կողբերդը՝ Քեղիի ամրոցը, տեղում ամբարտակ կառուցելու նպատակով:

Մէկ այլ դէպքում չափաւորեցին, որ Հայոց պատրիարքարանին պատկանող Երկրորդ Որդուոց Որոտման եկեղեցին վերականգնում են եւ կ'օգտագործեն՝ միաժամանակ որպէս պաշտամունքի վայր, Ժողովարահ, պատկերասրահ եւ համերգասրահ:

«Եթէ նախագիծը կեանքի կոչուի, ապա այն առաջինը կը լինի կրօնների պատմութեան մէջ: Ձեւափոխման ընթացքում կառուցի ճարտարապետական առանձնայատկութիւնները զարգացնելու նպատակով նախագծին ամբողջական մօտեցում է ցուցաբերում: Վերանորոգողական աշխատանքներին կարող են մասնակցել ճարտարապետներ եւ արուեստագէտներ», - յաւելեցին մասնագէտներն ու գործի անցան:

Մէկ այլ դէպքում հազարամեայ եկեղեցու պատմութիւնը չափաւորութիւն է դառնում հանրութեանը. պատճառը թերեւս արգելուած գօտի էր. խօսքը ինքնուրուի եկեղեցու մասին է:

Ինչէր ասես, որ չես լսի, իսկ ամենագարմանալին այն է, որ եթէ Թուրքիայում տեղի է ունենում մշակութային որեւէ կոթողի վերաբերեալ քննարկում, ապա դա վերաբերում է անպայման հայկական պատմական եկեղեցիներից որեւէ մէկին:

Բայց Թուրքիան այս շահութի

հետապնդող վերանորոգումների իրականացումը շատ է ուշացրել: Ահա թէ ինչու.

Վան նահանգի Գիւրփընար գաւառի Մեծինգեր գիւղում կային երկու հին հայկական եկեղեցիներ, որոնք երկուսն էլ այսօր չկան: Այս եկեղեցիների մասին մնացել են միմիայն յուշեր, որոնց մասին խօսում են տեղի բնակիչները: Երկու եկեղեցիներն էլ գանձագողների կողմից ամբողջութեամբ աւերուել են, թալանուել: Եկեղեցիներից մէկը վերջերս հիմնադրական քանդուեց՝ տեղում մզկիթ կառուցելու նպատակով, որի աշխատանքները դեռեւս չեն աւարտուել, իսկ միւս եկեղեցին, որի մէկուկէս պատերը դեռեւս կանգուն էին, «փրկուել» է եւ հիմա ծառայում է որպէս աղբանոց ու գոմաղբի պահեստ: Խորը փոսեր բացելով՝ ամբողջութեամբ թալանուել է հայկական գերեզմանոցը, եկեղեցում ոչինչ չի մնացել՝ բացի այս ու այն կողմ թափթփուած հայկական տառեր կողմ խաչքարերի կտորներից: Այս հերթական մշակութային ցեղասպանութեանն է անդրադառնում Aknews կայքը:

Կայքի փոխանցած տեղեկութիւնների համաձայն՝ այս շրջանում հայկական բազմաթիւ եկեղեցիներ եւ գերեզմանոցներ կան, որոնք ունեն համապատասխան ուշադրութեան կարիք, սակայն որոնք նոյնիսկ ընդգրկուած չեն պահպանման ցուցակներում: Վերոյիշեալ եկեղեցիները գտնուում են Մեծինգեր գիւղում: Ինչպէս այս 2 հայկական եկեղեցիները, այնպէս էլ գերեզմանոցը գանձագողների անգթութեան պատճառով ամբողջութեամբ աւերուել են:

Նախկին հայկական գերեզմանոցը հիմնադրական քանդուած է,

ոսկորները ցիրուցան եղած, իսկ խաչքարերի կտորները դեռեւս շարունակում են մարտնչել պատմութեան հետ ու իրենց վրայ պահել հին հայկական գրերի հետքերը:

Aknews-ին հարցազրոյց տուած գիւղի բնակիչներից Իսա Վարլըն ասել է, որ մի քանի տարի առաջ իրենց գիւղ են եկել երեք հոգի, որոնք ներկայացրել են որպէս լրագրողներ: Այդ երեք մարդիկ պեղումներ են կատարել եկեղեցում եւ գերեզմանոցում: Նրանց կողմից քանդուած քարերն էլ հետագայում գործածուել են գիւղացիների կողմից՝ այգիների, պարիսպների եւ այլ շինութիւնների համար: Ինչպէս վկայում է Վարլըն, նոյն մարդիկ հետագայում թալանել են նաեւ հայկական գերեզմանոցը. «Մենք աւելի ուշ տեղեկացանք, որ մեր գիւղ ժամանած լրագրողներն իրականում գանձագողներ են: Քանի դեռ շրջապատում լուրեր էին պտտուում, թէ այստեղ «ոսկի է գտնուել», ամէն եկող սկսեց պեղել եկեղեցիներն ու գերեզմանատուներ: Ի վերջոյ եկեղեցիներն ու գերեզմանոցը լրիւ անհետացան: Ինչպէս տեսնում էք, այս գերեզմանոցում ընդամենը մի քանի քար է մնացել, առանց այդ էլ այն այլեւս ոչնչով գերեզմանոց չի յիշեցնում: Վերեւում էլ կայ մի եկեղեցի, որը շրջապատուած է պարիսպներով: Այն դարձել է աղբի եւ թրիքի տեղ»:

Մէկ ուրիշ գիւղացի, որը չի ցանկացել յայտնել իր անունը, վկայել է, որ գիւղի միւս հայկական եկեղեցու տեղում կառուցուած է մի նոր մզկիթ: Aknews-ի թղթակցի հարցերին պատասխանող գիւղացիներից մէկն էլ տեղեկացրել է, որ

Շար.ը էջ 19



Singer Mohamad Salem

**EVERY SATURDAY**  
Live Arabic Music  
**MOHAMAD SALEM**  
& HIS BAND

**WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT**

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՄԵՆԱՀԱՄԵՂ ԸՄՇԱՍԵՍԱԿՆԵՐ: ՈՒՆԻ ՆԵՐՔԻՍ ԵՒ ԲԱՅՕԴԵԱՅ ՆՍՏԵԼՈՒ ԲԱԺԻՆՆԵՐ

Բաց է Ծաքաթը 7 օր: Ունի յատուկ սրահ հաւաքոյթներու

**(626) 281-1006**  
**(626) 576-1048**  
910 E. Main Str.  
ALHAMBRA, CA

**Lebanese Special Mezza .....per person \$27**  
Hummos, Imtabbal, Tabbouleh, Falafel, Spinach and Meat Pies, Raw Kubbeh, Salad, Kebbeh, Vegetarian Grape Leaves, Labneh, Feta Cheese, and Shawarma (Beef or Chicken). Your choice of Kebabs (Lamb, Bref, Chicken, and Kafta).



Sheik Wahib

**WHOLE LAMB SPECIAL**  
**\$245.00 + Tax**  
Whole Lamb Stuffed with Rice, Almonds, Pine Nuts and Pickles

**WHOLE LAMB WITH MEZZA**  
**\$399.00 + Tax**

**LEBANESE SUSHI**

Raw Kubbeh .....	\$10.95
Habra Nayieh .....	\$10.95
Raw Liver .....	\$10.95
Kafta Nayieh .....	\$10.95



**Wahib's**  
Middle East Restaurant

**Daily Buffet**


<b>Lunch</b>	<b>\$ 9.95</b>
(12 noon-4:00 pm)	
<b>Dinner</b>	<b>\$ 14.95</b>
(4:00 pm. - 9:00 pm.)	

**CALL WAHIB FOR RESERVATIONS**

### ԶՐԴՆԻԿԻ ԿԱՆՉՈՎ

«Աշնակն ինչպե՞ս դառնայ Սասուն...»: Գ. Էմին


**ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ**  
(Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ)



Աշնակն ամէն ինչ արեց, սակայն այդպէս էլ չկարողացաւ փարատել սասունցու չսպիացող վէրքը: Եւ ինչպէս Մուշեղ Գալշոյեանը, իւրաքանչիւր սասունցի Արաքսից այս կողմ հաւատում է, որ «հողի կորուստ կորուստ չէ», որ «հող իր տիրոջ կապախէ», ու մի օր պիտի կայանայ հողի ու տիրոջ բաղձալի հանդիպումը:

«Մի քանի րոպէ յուզմունքից ու հայրական տուն կանչող ներքին ձայնից քարացած՝ նայում եմ ներքեւ՝ հովտին՝ Զրդնիկ սարի լեռկ կատարին...», - այսպէս իր հայրենի հողի կանչին ականջալուր պատմաբան Գեղամ Կիրակոսեանը հասնում է իր պապերի ծննդավայր: Ու յարութիւն են առնում Ռեհան տատի բոլոր պատմութիւնները:

Եւ ականատեսի, հողակորոյս որդու ցաւից ծնունդ է Գեղամ Կիրակոսեանի երախտագիտութեան ձօնը՝ «Սասուն» պատմավաւերագրական աշխատութիւնը՝ շարադրուած հոգածու զաւակի, կարօտաբաղձ սասունցու գրչով: Այն համառօտ հանրագիտարան է Սասնոյ աշխարհի մասին՝ սկսած Ասորեստանի եւ Արարատեան երկրի թագաւորների արձանագրութիւնները:



րից մինչեւ Զրդնիկի մասին հիւսած Ռեհան տատի անմոռանալի գրոյցները:

Քաջագիտակ պատմաբանը ի մի է բերել բազմաթիւ աղբիւրների արժանահաստ վկայութիւնները, հայ եւ օտարագրի մի շարք հեղինակների ընձեռած հարուստ նիւթերը եւ դրանց յաւելելով ականատեսի ճշգրտումները՝ համադրութեամբ ստեղծել է մի արժէքաւոր ուսումնասիրութիւն իր դաւթածին պապերի խրոխտ ու հպարտ երկրի մասին:

Գիրքը բաղկացած է չորս մասերից, որոնց խօսուն վերնագրերն ամփոփ տեղեկութիւն են հաղորդում արժարժած հարցերի շուրջ՝ ա) «Սասունը Ասորեստանի եւ Արարատեան երկրի թագաւորների արձանագրութիւններում», բ) «Սասունը 4-15-րդ դարերում», գ) Սասուն-Տարօնը Թոռնիկեանների իշխանութեան շրջանում» եւ դ) «Սասունի տեղագրութիւնը»: Հեղինակը հետաքրքիր զուգահեռներ է անցկացնում պատմական փաստերի եւ բանահիւսակական տուեալների միջեւ՝ այս պարագայում որպէս բազմախօսուն յուշարձան ունենա-

լով անձնական տպաւորութիւններով՝ նա իր յոյզերի յուզակիցն է դարձնում ընթերցողին, որին ծանօթ ու հարազատ են դառնում ինձորենքն ու Մտկենքը, Սասնայ ջուրն ու Մարսթան, Յիցնքարն ու Դաժբատրիկը, Կորընկեզն ու Քաջըռենքը...

«Ամէն ինչ սուրբ է այնտեղ, ուր նուիրումն է ծնրադրում», - ասում է ամերիկացի գրող, իմաստասէր եւ բժիշկ Օլիվեր Հոլմսը:

Պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Կիրակոսեանի գիրքը ծնունդ է նուիրում ի ծնրադրութեամբ, բանիմաց մաս-

նագէտի տքնաջան աշխատանքով, որդիական պատասխանատուութեամբ, ուստի աւելորդ են գնահատանքի բոլոր խօսքերը:

«-Բարով ես եկել, եկել ես որ ինձ ազատե՞ս օտարի դարչապարից,- տնքացող հողի հարցը շիկացած երկաթի պէս մխրճւում է սիրտս...»:

«Սասուն» հայրենապատումը առկախ պատասխանն է տնքացող հողին, Զրդնիկի կանչի արձագանքը, ընդամէնը մի դրուագը այն ծաւալուն ուսումնասիրութեան, որ նպատակադրուել էր ամբողջացնել անուանի գիտնականը:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA**  
**ՀԵՌԱՋԱՅՆԵԼ (626) 797-7680**

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ**  
**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԱԽՈՒՄԻ**  
 Ղեկավարութեամբ՝ Հայրէնի արուեստագէտ պարուսոյց **ՏԻԿԻՆ ԱՐԵՒԻԿ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ**

**NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION**  
**ARMENIAN DANCE ENSEMBLE**  
 Dance instructor and artist: **MRS. AREVIK HAKOPYAN**

**FOR ALL AGES 5 & UP**  
**5 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՍԿՍԵԱԼ**

**626.398.0506**  
**626.710.0317**

**REGISTRATION STARTS JUNE 4TH**  
 Tuesdays 5:00 - 6:00pm  
 Thursdays 5:00 - 6:00pm  
 Fridays 7:00 - 8:00pm

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԻՍ 4-ԷՆ ՍԿՍԵԱԼ**  
 Երկուշաբթի օրերը ժամը 5:00-6:00  
 Հինգշաբթի օրերը ժամը 5:00-6:00  
 Ուրբաթ օրերը ժամը 7:00-8:00

**CLASSES BEGIN JUNE 14**  
**MONDAYS and THURSDAYS • 5:00-6:00**

**Պարի փորձերը ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՒ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍ 14-ԷՆ ՍԿՍԵԱԼ երեկոյեան ժամը 5:00-6:00**

Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ  
**1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104**

### ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ԻՐԱՆԱՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Իրանում մինչ այժմ պահպանուել են մի շարք շինութիւններ (գլխավորապէս եկեղեցական), որոնք հայկական ճարտարապետութեան կոթողներ լինելու հետ մէկտեղ, վկայում են հայկական օճախների հնադարեան գոյութեան մասին:

Դրանցից ամենահինը, սուրբ Թադէոս վանքը, Հայաստանում քրիստոնէութեան տարածման ժամանակաշրջանին վերաբերող ճարտարապետական յուշարձան է:

Պատմաբանների կարծիքով այն հիմնուել է մ.թ. 4-5 դարերում: Նրա առաջին շինութիւնը հեթանոսական տաճարի հիմքերի վրայ կառուցած եկեղեցին է: Սեւ քարով կառուցուած լինելու պատճառով տեղի մասնետական բնակչութիւնը անուանել է Ղարա Քիլիսա (Սեւ եկեղեցի):

1319 թ. երկրաշարժի հետեւանքով այն քանդուել է վերականգնուել է 1329 թ.: Այդ մասին է վկայում վանքի պատին եղած մակագրութիւնը:

Վանքի յետագայ շինարարութիւնը իրագործուել է 1811-1822 թթ.:

Վանքի վերջին շինութիւնները կառուցուած են սպիտակ մարմարաքարով:

17 դ. ճարտարապետական յուշարձան է Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքը:

Նրա կառուցումը սկսուել է 1606 թ.: Վանքի առաջին կառուցը եղել է Նոր Զուղայի Ամենափրկիչ եկեղեցին, որն այդպէս է կոչուել Հին Զուղայում գոյութիւն ունեցող վանքի անունով:

1684 թ. Նոր Զուղան ընդարձակուեց, Ամենափրկիչ եկեղեցին քանդուեց, իսկ նրա տեղում 9 տարում կառուցուեց Ս. Յովսէփ եկեղեցին, որը Ամենափրկիչ վանքի հիմնական կառուցն է: Ապա կառուցուեց թեմական առաջնորդա-

րանի շէնքը: 1905-1906 թթ. կառուցուեց նաեւ թանգարան մատենադարանի շէնքը:

Տաճարի հիմնական շէնքը ամբողջապէս կառուցուած է հայկական ճարտարապետութեան ոճով, այն ունի երկու դահլիճներ:

Դահլիճների ներքին պատերը ու առաստաղը զարդարուած են աստուածաշնչային պատմաների թեմաներով կատարուած յուշանկարներով: Այդ նկարազարդումները գոյները մինչեւ այժմ էլ պահպանել են իրենց թարմութիւնը:

Նոր Զուղայում կայ յիշատակութեան արժանի եւս մի ճարտարապետական շինութիւն Բեթղէհեմի եկեղեցին: Այն կառուցուել է 1627-1635 թթ. քաղաքի կենտրոնական փողոցի վրայ: Եկեղեցու ներսը ամբողջութեամբ զարդարուած է որմնանկարներով:

Ըստ արուեստագէտների ենթադրութեան դրանք պատկանում են նկարիչ Մինասի վրձինին: Նրա դիմանկարներում զգացում են հայկական ազգային գեղանկարչութեան բնորոշ առանձնապատկութիւնները:

Շիրազի հայկական եկեղեցին կառուցուել է 1662 թ. իսկ 1816 վերակառուցուել է:

Արտաքուստ այն անշուք է եւ ծեփապատ, միջնադարեան շինութիւնների նման պատած բարձր պարիսպներով:

Սակայն ինչպէս եւ Ամենափրկիչ վանքն ու Բեթղէհեմի եկեղեցին, Շիրազի եկեղեցին գրաւիչ է իր առաստաղի որմնանկարներով որոնք գեղարուեստական մեծ արժէք ունեն:

Հայկական ճարտարապետութեան աչքի ընկնող յուշարձաններ են նաեւ հին Զուղայի աջ ափին գտնուող սուրբ Ստեփանոս վանքը, ինչպէս նաեւ Դերիկ եւ Սուրբ Թադէոսի վանքերը:

### ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԻԵԼ ԵՆ ՍԵՖԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԶԱՐԴԱՆԱԽՇԵՐ

Վերջերս Սպահանում Նոր Զուղայի հայոց Ս. Ստեփանոս եկեղեցու ներքին վերանորոգման ընթացքում խորանի պատից հեռացրած շերտի տակից երեւան են եկել Սեֆեան (Սաֆաւեան) շրջանի զարդանախշեր: Սպահանի նահանգի մշակութային ժառանգութեան պահպանման եւ զբօսաշրջութեան վարչութեան պետ Էսֆանդիար Հեյդարիփուրը հաւաստիացնել է, որ Սպահանի հայոց թեմի ազգային առաջնորդարանի վերահսկողութեամբ ամբողջութեամբ վերակառուելու է Ս. Ստեփանոս եկեղեցու նորոգման ու շերտերի հեռացման աշխատանքը: Վերանորոգման աւարտից յետոյ մշակութային ժառանգութեան

պահպանման վարչութեան մասնագէտները սկսելու են զարդանախշերի վերամշակման աշխատանքները: Մշակութային ժառանգութեան պահպանման վարչութեան պետի խօսքերով «Նորայայտ զարդանախշերը համազօր են Ս. Ամենափրկիչ վանքի ներքին զարդարանքներին»:

Նշելի է որ չորս դարուց աւելի, բազմահազար հայերի Նոր Զուղա հաստատուելուց յետոյ, հայաբնակ այդ նոր քաղաքում հայերի միջոցով կառուցուել է 12 եկեղեցի: Կառուցուել է նաեւ սուրբ Ամենափրկչեան վանքը, որի շրջափակում են վանքի թանգարանը, մատենադարանը, տպարանը, եւ հայոց առաջնորդարանը:

### ԳԻՏՆԱԿԱՆ Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԱԾ

Թեհրանէն ստացուած տեղեկութեանց համաձայն՝ իրանահայ ծանօթ գիտնական Դոկտ. Գէորդ Կարապետեան վերջերս բարձր գնահատականի արժանացած է Գիտութեան եւ Արդիւնաբերութեան Տրդ փառատօնի ընթացքին: Արդարեւ, իրանի էլէքթրօնիկայի եւ Ելեկտրակականութեան մասնագէտներու Միութիւնը փառատօնի ժամանակ ոսկէ շքանշանով պատուած է Դոկտ. Գէորդ Կարապետեանը:

Այս առթիւ լոյս տեսած հաղորդագրութենէ մը կ'իմանանք թէ իրանահայ գիտնականը բազմիցս արժանացած է մրցանակներու եւ գնահատագրերու:

### ՃՇՂՈՒՄ

«Մասիս» մէջ նախորդ թիւով լոյս տեսած Մարիէթ Մինասեան-Օհաննէսի «Մարդկային Ընկերութեան Կեղծ Դիմակները» յօդուածի վերջին երկու պարբերութիւնները սխալմամբ անտեսուած ըլլալով պէտք է կարդալ ստորեւ, որուն համար կը խնդրենք յօդուածագրի ներողամտութիւնը:

Սակայն ցաւալիօրէն վերոյիշեալ դիմակները եղած են պիտանի թթուածինը կեանքի յարատեւման: Եղած են մեր առօրեայ կեանքի պէտքերը, առանց որոնց չենք կրնար ապրիլ: Եւ աւելի ցաւալին այն է թէ, այս «փորձառութիւն»ը սկսած են մարդիկ փոխանցել իրենց զաւակներուն եւ թոռներուն, սեպելով զանոնք բարբեր եւ սովորութիւններ անվերջանալի շրջանակի մը մէջ դառնալով:

Պէտք է սորվիլ «ոչ» ըսել եւ չվախնալ ընկերային մեկուսացումէ կամ առանց շրջանակի ու համայնքի ապրելու վախէն: Չձգել որ մեր դիմակները խեղդեն մեր ներքին լոյսը, այլ՝ գործածենք զանոնք տեղեկելու ապահովութիւն եւ պաշտպանութիւն: Ժամանակն է որ մենք հանենք այլեւս մեր դիմակները բանալով մեր բազուկները իրարու՝ ստեղծելով միջնորդող մը ուր ոչ ոք պահուրտի այս քանդիչ դիմակներու ետին:

### ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱՅԱԳԵՏ ՍԱՔՍԻՍ ԵՒԱԴԵԱՆԻ ՀԵՏ

Շարունակուած էջ 5-էն

պանական քայլ կատարել, որը պարտաւոր է անել մեզից իւրաքանչիւրը: Անգամ մէկ կորսուած հայի վերադարձն արմատներին, ես համարում եմ ձեռք բերում: Սրանք գուցէ մանրուքներ թուան, բայց հաւատացնում եմ, շատ կարեւոր են: Հայապահպանութիւնը բոլորիս խնդիրն է:

-Այժմ ի՞նչ ծրագրեր է իրականացնում Ձեր միութիւնը:

- Հայկական մշակոյթի եւ Հայաստանի վերաբերեալ աշխատութիւնների երեք հաւաքածու է պատրաստուում: Հայաստանի կրօնի եւ հոգեւոր պատմութեան, հայկական եկեղեցու ծագման վերաբերեալ երկու հատորների հրատարակումից յետոյ, մենք ծրագրում ենք տպագրել Սբ. Գրիգոր Լուսաւորչի եւ Սուրբ Հոգում մուսուլմանական էքսպանսիայից առաջ հայերի կեանքի վերաբերեալ աշխատութիւններ:

Նախատեսում ենք հրատարակել աշխատութիւն այն սրբերի մասին, ովքեր քրիստոնէութիւն են տարածել Եւրոպայում՝ Սբ. Գրիգոր դե Թալլար, Սբ. Սերվատիուս դե

Մաստրիխտ եւ այլն:

Անդադար աշխատում ենք Հայաստանից դուրս հայերի վերաբերեալ փաստաթղթերի հաւաքագրման ուղղութեամբ:

Ուսումնասիրում ենք միջնադարեան Եւրոպայում մինչեւ խաչակրաց արշաւանքները հայերի վերաբերեալ ձեռագրերը, կ'անդրադառնանք հնէաբանական եւ յուշարձանային մասունքների ուսումնասիրութիւններին, այնուհետեւ կ'ուսումնասիրենք 1095-1500թթ. վերաբերող փաստաթղթերը: Իւրաքանչիւր աշխատութեան համար մենք կ'ուսումնասիրենք բոլոր ձեռագրերը, ունենք դրանց բարձրորակ թուային լուսանկարները, որպէսզի գրաքննութիւնը լոյս տեսնի: Երբ այս աշխատանքի առաջին փուլն աւարտուի, մենք նախատեսում ենք Հայաստանին նուիրել բոլոր լուսանկարների պատճէնները եւ գրաքննութեան նիւթերը:

Պիտի պատրաստենք աղբիւրագիտական նիւթերի ցանկ, այն կ'առաջարկենք բոլոր հայագէտներին, ուսումնասիրութիւններ կատարելուց յետոյ, մենք այն կը տպագրենք:

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104 Norsercunt@sbcglobal.net

### ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՀԵՌՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ  
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ  
(ԿԼԵՆՏԷՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)  
GLOBACAST SATELLITE

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

### ՔԱՉ ՆԱԶԱՐ

ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան

ժամը 10:00-ից 12:30

Կլէնտէյլի 280-րդ կայանից



ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ

ՍԹՐԵՍՆԵՐ. ԻՆՉՊԵՄ ՅԱՂԹԱՅԱՐԵԼ

ԱՄՍԼԻՍ ԳԱՐԲԻԷԼԵԱՆ «ԱՆԿԱԽ»

Մեր ամենօրեայ կեանքում յաճախ ենք առնչուում նեարդալոգիայի տարբեր իրավիճակների, որոնք յետագայում սթրեսների առաջացման պատճառ են դառնում:

Սթրեսը օրգանիզմի պատասխանն է զգացական հանգստությունը եւ հաւասարակշռութեանը իրաւիճակներին: «Սթրես» «դրոյթը, որն առաջին անգամ իր հոգեբանական աշխատութիւններում օգտագործել է Ուոլտեր Բեննոնը եւ լայն գործածութիւն է ստացել միայն 1946 թ. սկսած, թարգմանաբար նշանակում է «լարուածութիւն, ճնշում»:

Առաջին հայեացքից սթրեսը ժամանակակերպ երեւոյթ է, բայց այն կարող է անդառնալի բացասական ազդեցութիւն թողնել առողջութեան վրայ: Սթրեսներն առաջին հերթին ազդում են նեարդալոգիայի եւ սրտանոթային համակարգերի վրայ՝ առաջացնելով դիպրեսիաներ, սրտային եւ արեան շրջանառութեան հիւսնաբանութիւններ, մարսողութեան, լեարդի եւ երիկամների աշխատանքի խանգարումներ, խոցեր, սեռական համակարգի հետ կապուած խնդիրներ եւ նոյնիսկ ուռուցքներ: Դրանք բացասաբար են ազդում նաեւ արտաքինի վրայ՝ առաջացնելով քաշի հետ կապուած խնդիրներ (որպէս մարսողութեան եւ նիւթափոխանակութեան խանգարման հետեւանք) եւ մազաթափութիւն, փճացնելով ատամները, վատացնելով մաշկի որոշ, վիճակ եւ այլն:

Հոգեբան Դաւիթ Գալստեանն ասում է, որ սթրեսի պատճառ կարող են դառնալ այն իրավիճակները, որոնք առաջացնում են ուժեղ զգացմունքներ, եթէ նոյնիսկ այդ զգացմունքները դրական են: Որոշ մարդկանց համար սթրեսի պատճառ կարող են լինել ամուսնութիւնը, երեխայի ծնունդը, աշխատանքը կամ նոյնիսկ աննշան բաներ, ասենք՝ երկար ինչ-որ բանի սպասելը կամ մարդկանցով լի երթուղային նստելը:

Ըստ հոգեբանի՝ Հայաստանում կարեւոր սթրեսածին գործօն է հեռուստատեսութիւնը: «Հեռուստատեսութեամբ» յաճախ ցուցադրում են թանկարժէք իրեր, յայտնի մարդկանց եւ աստղերի տներ եւ խոհանոցներ, իսկ միջին խաւի մարդկանց համար, ովքեր դիտում են այդ ամէնը, բայց չեն կարողանում իրենց նման շուքութիւն թոյլ տալ, դա լուրջ սթրեսի պատճառ է», - ասում է Գալստեանը: Լուրջ սթրեսային գործօն են նաեւ հայկական ընտանիքներում կիրառուած յարաբերութիւնները: Այստեղ դեռ ընտանեկան շփման հայեցակարգ չկայ, էթիկա չկայ, եւ սա նոյնպէս սթրեսների պատճառ է թէ՛ ընտանեկան զոյգի, թէ՛ նրանց երեխաների համար», - ասում է հոգեբանը: Մէկ այլ պատճառ՝ ուսուցիչ-աշակերտ յարաբերութիւնը. «Ուսուցիչն ասես արժեզրկուած է այսօր եւ այլեւս հերոս չէ աշակերտի աչքում: Բոլոր առօրեայ խնդիրները, որոնց առնչում են ուսուցիչները (ինչպէս, ասենք, դպրոցների օպտիմալացումը, դպրոցում տիրող լարուածութիւնը, կրճատումները եւ այլն), նրանց դարձնում են ամե-



նասթրեսային, հոգեբանօրէն ամենախոցելի խաւերից մէկը»: Օրինակ՝ հոգեբանը պատմում է, որ անձամբ ճանաչում է մի ուսուցչուհու, որն աշխատում է թիւ 110 դպրոցում: Նա անձնական կեանք չունի, աշխատանքը նրա համար սթրեսների աղբիւր է, եւ նա անընդհատ վախենում է, որ իրեն կ'ազատեն աշխատանքից...

Գալստեանն ասում է, որ սթրեսները լիովին կանխել հնարաւոր չէ, քանի որ դրանց հիմնական պատճառը մեր ամէնօրեայ կեանքն է, բայց հնարաւոր է նկատելիօրէն նուազեցնել դրանց վնասակար ազդեցութիւնը:

Ահա թէ ինչ է խորհուրդ տալիս մասնագէտը.

- Նախ՝ անհրաժեշտ է փոխել ձեր այսպէս կոչուած «ներքին լարումը»՝ ձեր վերաբերմունքը կեանքի եւ արտաքին սթրեսների նկատմամբ: Աշխատէք աւելի դրական վերաբերմունք ունենալ կեանքի նկատմամբ, միշտ չիչէք, որ բոլոր դժուարութիւնները ժամանակավոր բնոյթ ունեն: Յիշէք, որ եթէ լինէք սառնասիրտ ու հանգիստ, կը կարողանաք յաղթահարել բոլոր դժուարութիւնները:

- Աշխատէք մենակ չմնալ: Ծփուէք մարդկանց հետ, խօսէք ձեր խնդիրների մասին: Երբեք ձեր խնդիրները ձեր մէջ մի պահէք. եթէ չխօսէք, աւելի վատ կը զգաք:

- Ծփուէք միայն այն մարդկանց հետ, ովքեր ձեզ դրական էմոցիաներ են պարգևում: Բնականաբար, աշխատէք չչփուել նրանց հետ, ովքեր ձեզ դուր չեն գալիս կամ նեարդալոգիան են: Հոգեբանը խորհուրդ է տալիս նաեւ օրական մէկ ժամ շփուել սիրելի մարդու հետ եւ խօսել նրա հետ բոլոր յուզող հարցերի մասին: Լաւ «դեղ» է սթրեսի դէմ նաեւ սիրելի մարդու հետ համբուրուելը:

- Գտէք ինչ-որ զբաղմունք, որը ձեզ հաճոյք եւ դրական լիցք է հաղորդում: Ծատ կանայք ասում են, որ իրենց համար սթրեսներից ազատուելու եւ հանգստանալու լաւագոյն միջոցը հիւսնելն է: Իսկ տղամարդիկ ասում են, որ ձկնորսութիւնից լաւ միջոց չկայ: Ուրեմն, դուք էլ փորձէք, գուցէ հիւսնելն ու ձկնորսութիւնը ձեզ նոյնպէս խաղաղեցնեն:

- Եթէ ձեր սթրեսի պատճառն աշխատանքը, աւօրեայ զբաղուածութիւնն ու մշտական «չհասցնե-

ԱՌՈՂՋ ԸԼԼԱԼՈՒ ԶԱՄԱՐ...

ՈՐՈՇ ՏԱՐԻՔԷ ՄԸ ՎԵՐՋ ԽՆԱՍԵՑԷՔ ՁԵՐ ԹՈՔԵՐԸ ԵՒ ԵՐԻԿԱՄՆԵՐԸ

Չորս Միջազգային Համաժողովներ տեղի ունեցան Անգլիոյ, Շուէտի, Ամերիկայի եւ Ֆրանսայի մէջ, որոնց ներկայ եղան մարդկային երկարակեցութեան ականաւոր մասնագէտներ եւ բժիշկներ:

Ասկէ առաջ, Պրատն-Սէքըրտ նախատեսեց երիտասարդացումի դրութիւնները, իսկ Պոկոմոլէց, Պարտաք եւ ուրիշներ իրագործեցին այդ դրութիւնները:

Ներկայիս, բազմաթիւ գիտնականներ կը զբաղին երկարակեցութեան եւ երիտասարդացումի հարցերով: Բայց իրականութեան մէջ, ե՞րբ կը սկսի ծերութեան շրջանը:

Մոլիէլի «Կծծի»-ի շրջանին, կատակերգութեան հերոսուհիներէն՝ Ֆրոգին կը յայտարարէր թէ այրերու գեղեցիկ տարիքը 60-ն է: Ակներեւ է թէ չափազանցութիւն մըն է ասիկա, տրուած ըլլալով որ այդ շրջանին, անդարութեան չափազանցութիւնները, առողջապահական թերի պայմանները, մարմնամարզի չգոյութիւնը կը կրճատէին մարդկային կեանքը:

Բայց պէտք է ընդունիլ թէ վաթսուսն վերջն է, որ գործարանական տկարութիւնները կը ստիպեն մարդ էակը որ մտահոգութեամբ դիտէ իր ապագան:

Առողջ մարդ մը, այսինքն սրտի, երիկամներու, թոքերու եւ արեան շրջանառութեան գործարաններու վրայ որեւէ ախտ չունեցող ենթակայ մը, ֆիզիքական յոգնութիւն կը զգայ չիսուն տարեկանին: Սակայն, եթէ այդ տարիքէն վերջ մասնաւոր խնամքի

առարկայ դարձնէ իր թոքերը, երիկամները, եռակները եւ սիրտը, առողջ ծերութիւն մը կրնայ ապահովել իրեն:

Ի՞նչ ՊէՏՔ է ԸՆԵԼ ԹՈՔԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Եթէ լաւ շնչառութիւն մը ունիք, մի մոռնաք թոքատապի վտանգը:

Թոքատապը յաճախակի է տարեցներու մօտ եւ յառաջ կու գայ պաղառութենէ:

Ատենօք, այս հիւանդութիւնը մահացու էր ծերերու համար. ներկայիս, սթրէքթոմիսինի շնորհիւ, կարելի է պարտութեան մատնել այդ հիւանդութիւնը:

ԵՐԻԿԱՄՆԵՐՈՒ ՀԻՒԱՆԴՆՆԵՐԸ

Որոշ տարիքէ մը վերջ, մէզի քննութիւնը պարտաւորիչ է:

Նախընտրելի է «ալպիւմին»-ի հետք անգամ չունենալ, վստահի «ալպիւմին»-ի գոյութիւնը երիկամունկային գտիչի թեթեւ անգործութիւն մը կը բնորոշէ: 1881-ին, ալպիւմինի հետքի դէմ բժիշկներ կաթի խիստ պահեցողութիւն կը յանձնարարէին իրենց հիւանդներուն:

Բարեբախտաբար, հեռացած ենք այլեւս այդ շրջաններէն եւ ներկայիս, մասնագէտներ եւ բժիշկներ դէմ կ'արտայայտուին կաթի խիստ պահեցողութեան, այս վերջինին հետեւանք նկատելով մարտդական անհանգստութիւններ, որոնց պատճառաւ ենթական կը նիհարնայ եւ կը տկարանայ:

«Ալպիւմին»-ի դէմ պէտք է աղի գործածութենէ հրաժարիլ ի սպաս:

լու խնդիրն» է, աշխատէք նախօրօք պլանաւորել ձեր օրուայ գործերը, հետեւէք գրուած պլանին եւ մի մոռացէք հանգստի մասին:

- Լսէք միայն դրական էմոցիաներ հաղորդող երաժշտութիւն:

Ոչ մի ազրեսիւ երգ, ոչ մի տխուր յիշողութիւն արթնացնող երգ...

- Գուցէ այս խորհուրդը կարող է տարօրինակ թուալ, բայց եթէ սթրեսային վիճակում էք, զգուշութեամբ վերաբերուէք նորութիւններին, յատկապէս բացասականներին:

Եթէ նոյնիսկ լսում կամ կարդում էք ինչ-որ բացասական էմոցիաներ առաջացնող բան, աշխատէք այն սրտին մօտ չընդունել:

- Եթէ երիտասարդ էք եւ ունէք այդպիսի հնարաւորութիւն, անպայման ժամանակ յատկացրէք սպորտին ու ֆիզիքական վարժութիւններին, քանի որ դրանք նուազեցնում են հոգեկան լարուածութիւնը:

Մոռացէք ալքոհոլի եւ ծխախոտի մասին, քանի որ դրանք էլ

աւելի են ուժեղացնում սթրեսները եւ բացասաբար են ազդում նեարդալոգիայի համակարգի վրայ: Քաֆիէնը նոյնպէս զրգուում է նեարդերը, ինչը սթրեսային վիճակում գտնուող մարդուն բոլորովին պէտք չէ... Խմէք բնական հիւթեր, կանաչ թէյ, կերէք մրգեր, բանջարեղէն եւ թարմ կանաչեղէն, քանի որ դրանք հանգստացնում են եւ սնուցում օրգանիզմն անհրաժեշտ վիթամիններով:

- Կապ պահպանէք լաւ հոգեբանի հետ: Հայաստանում հոգեբանի հետ խորհրդակցելու մշակուց ղեռ այնքան էլ զարգացած չէ, բայց այլ երկրների փորձը ցոյց է տալիս, որ հոգեբանը կարող է օգնել յաղթահարելու սթրեսներն ու շատ այլ հոգեբանական խնդիրներ:

Եւ, վերջապէս, չիչէք, որ կեանքն առանց սթրեսների շատ միապաղաղ ու անհետաքրքիր կը լինէր: Սթրեսների ֆոնի վրայ դրական էմոցիաները էլ աւելի վառ են երեւում:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91107  
Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

### ԱՅԱԶԱՆԳ

#### Շարունակում է 6-էն

տաքին գործերի նախարար պարոն Օսկանեանը, աւելի շուտ, պարոն տասը տոկոսը մեզ համոզել էր ցանկանում, որ Հայաստանում առկայ կացութեան համար իշխանութիւնները միայն տասը տոկոսով են պատասխանատու: Թողնենք այդ եւ խօսենք փաստերով եւ կարելի է: Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ փլուզուած, բառիս բուն իմաստով հիմնայատակ արուած Գերմանիան ոտքի կանգնեց օտարերկրեայ կապիտալի (հիմնականում ամերիկեան) ներդրումների, բնակչութեան կրթութեան բարձր մակարդակի եւ ապա նաեւ նրա շնորհիւ, որ գերմանացի այն ժամանակուայ պետական այրերը ստեղծեցին այնպիսի օրէնքներ, այնպիսի պայմաններ, ոչ թէ միայն իրենց անձնական շահերից ելնելով, այլ երկրի վերականգնման եւ ժողովրդի բարօրութիւնը հեռանկար ունենալով:

Գերմանիայի այդ վիճակը համեմատենք քսան տարի առաջուայ Հայաստանի կացութեան հետ, այստեղ կարելի է միանգամայն երկու գուգահեռներ անց կացնել:

ա- Այն ժամանակ թէ Հայաստանում եւ թէ սփիւռքում գոյութիւն ունէր այնպիսի մտաւորական կարող ուժ, կային այնպիսի հեռանկար ունեցող եւ բազմապիսի որակեալ մասնագէտներ, ովքեր կը կարողանային ստանձնել երկրի մասնաւոր տնտեսութեան վերականգնման ղեկավարութիւնը եւ ապահովել բոլոր տեսակի արտադրական աշխատանքները:

բ- Իսկ որտեղի՞ց ներդրումների համար անհրաժեշտ կապիտալը:

Թէ անցեալում եւ թէ այսօր սփիւռքահայութիւնը տնտեսապէս այնպիսի կարող վիճակում էր եւ է, որ շատ դիւրին կը կարողանար եւ կարող է անհրաժեշտ գումարներ ներդնել Հայաստանի եւ Արցախի տնտեսութեան զարգացման համար: Միայն թէ պէտք էր դրա համար Հայաստանում նախադրեալներ եւ բարենպաստ պայմաններ եւ օրէնքներ ստեղծուէին, եթէ այդպիսիք կային, ապա պէտք է դրանք հարգուէին հենց իրենց՝ օրէնսդիրների եւ օրէնքը հսկողների կողմից, ինչը չկատարուեց, թէ ինչո՞ւ, մի քանի գործօններ կան՝

ա- Հայաստանի նոր իշխանաւորները իրենց միակ ժառանգը եւ տէրը երկրի ամէն ինչին նկատելով, վախենում էին սփիւռքահայ-

յութեան կապիտալի մրցակցութիւնից: Բայց այդ վախը տարրական էր, խեղճ էր եւ ելնում էր նրանց՝ ոչինչ չանել, բայց հնարաւորին գետնած երկրի ամէն ինչը սեփականացնելու ձգտումից, որի հնարաւորութիւնը հենց իրենք էին ստեղծել:

բ- Նոր իշխանութիւնների համար աւելի հեշտ էր եւ իրենց անմիջական շահն էր, հետեւիլ ներքին շուկայում անարխիային եւ քանի դեռ իրենք իշխանութիւն ունեն, երկիր ներմուծել թրքական, արաբական, կամ պարսկական այլեւայլ սպառողական անորակ ապրանքներ, քան պայմաններ ստեղծել եւ հնարաւորութիւն տալ նրանց, ովքեր նման ապրանքների արտադրութիւնը տեղում կազմակերպել կարող էին:

Այս երկու հիմնական գործօններն էին, որ կործանարար եղան երկրի համար, այդ պարագաներն էին, որ միանգամից գրոյի հաւասարեցրին երկրի տնտեսական կարողութիւնը, որը դեռ շարունակուում է: Դա էր ՀՀԾ-ական քաջերի ծառայութիւնը երկրին եւ հայ ժողովրդին, ովքեր սկզբում վայելում էին համայն աշխարհի հայութեան մեծամասնութեան վստահութեան շնորհիւ էլ իշխանութեան գլուխ անցան, բայց հենց սկզբին նրանց անելիքն եղաւ նախ քանդել եղածը, մերժել հինը, ծուկն-ծուկն անել, թալանել ամէն ինչ, որ գոյութիւն ունէր երկրում, որպէսզի երկրի անտէր մնացած եւ իրենց ձեռքն անցած ունեցուածքից իրենք ամենալաւ պատառը կորզել կարողանան: Աւելի շատ, աւելի լաւը, աւելի մեծը եւ այն էլ ամէն զնով, այդ էր նրանց նշանաբանը եւ միակ մտահոգութիւնը:

Իհարկէ շատերը կը փորձեն հակաճառել, որ սփիւռքահայութիւնը պատրաստակամութիւն չի ցուցաբերել Հայաստանում ներդրումներ կատարել, բայց բազմաթիւ են այն անհրաժեշտ փաստերը, որ ով փորձել է այդ, ապա նախ կորցրել է իր դրամը, յետոյ հաւատը եւ հիասթափուած ու դառնացած հեռացել է երկրից, իսկ որոշները իրենց այդ համարձակ քայլի համար վճարել են նաեւ իրենց կեանքով:

Այո, այսօր սփիւռքահայը, այո, ամբողջ հայութիւնը կորցրել է իր հաւատը Հայաստանի իշխանութիւնների նկատմամբ (այս է չարիքի մեծագոյնը): Որովհետեւ երկրում ոչ մի ժամանակաշրջանում

### ԻՄԱ 1920 ԹՈՒՎԱԿԱՆԸ ՉԷ

#### Շարունակում է 7-էն

ասատանի ջանքերը՝ այդ երկրներն իր քաղաքականութեանն ինտեգրելու ուղղութեամբ, խրախուսում է Արեւմուտքի կողմից: Դրա դիմաց Ռուսաստանին առաջարկում են առաւելագոյն ինտեգրում եւ արտաւստեան անվտանգութեան համակարգին, ասել է Մանուէլ Սարգսեանը:

Վրաստանը սարսափով է զգում Ռուսաստանի ճնշման դէմ իր անպաշտպանուածութիւնը: Արեւմուտքի կողմից մատուցելով բախտի քմահաճոյքին (ինչպէս Ատրպէյճանն ու Թուրքիան), այս երկիրը փորձում է աջակցութիւն գտնել Թուրքիայից ու Իրանից: Թուրքիան ու Ատրպէյճանն, իրենց հերթին, պատեպատ են ընկել Արեւմուտքի ու Ռուսաստանի եւ Մերձաւոր Արեւելքի միջեւ, սեփական պահանջներին աջակցութիւն որոնելով: Ոչ մէկի համար հասկանալի չէ Ռուսաստանի նոր քաղաքականութեան էությունը՝ բոլորը յոյս ունեն աւանդական գործարքի քաղաքականութեան վերածննդին, ասում է փորձագէտը:

Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած վիճակը նոյնպէս հակուած է փոխուելու: Հայկական խնդիրների աշխարհաքաղաքական կարգաւորման 18-

ամեայ մեխանիզմը՝ Մինսկի խումբը, անցնում է ստուեր, տեղ բացելով Ռուսաստանի եւ այլոց համար: Ստեղծուած վակուումը լցում է Հարաւորկաստան շրջանի ազդեցիկ հարեւանների ակտիւութեամբ, որոնք, իրենց հերթին, սեփական խնդիրներն ունեն առաջատար տէրութիւնների հետ: Առաջացել են նաեւ սկզբունքորէն նոր խնդիրներ միմեանց միջեւ յարաբերութիւններում: Թէ ինչպէս են նոր պայմաններում արտայայտուելու Հարաւային Կովկասի հանդէպ այդ երկրների աւանդական մտեցումները, իրենք էլ չեն կարող հասկանալ, ասում է Մանուէլ Սարգսեանը:

Շահերի ու դիրքորոշումների վերանայման հրամայականը ծառայել է բոլորի առջեւ: Դա վերաբերում է նաեւ Հայաստանին: Պէտք է հեռու մնալ սեփական շահերն այլոց շահերի հետ նոյնացնելու գայթակղութիւնից եւ ուրիշի վրայ յոյս դնելու սովորոյթից: Նման գայթակղութիւնը ամենամեծ սպառնալիքն է անվտանգութեանը: Նոր պայմանները պարունակում են նոր ռեսուրսներ Հայաստանի անվտանգութիւնն ապահովելու համար, դրանք պէտք է ընդամենն օգտագործել: Հիմա 1920 թուականը չէ, նշել է Մանուէլ Սարգսեանը:

անկախ դատարան եւ գործադիր մարմիններ գոյութիւն չեն ունեցել եւ չունեն, որոնք հասարակ ժողովրդին կը պաշտպանէին եւ կը պաշտպանեն պետական պաշտօնեաների եւ այլ ազդեցիկ անձերի կամայականութիւններից եւ քանի որ դա այդպէս է, ապա օրէնքը կը մնայ թղթի վրայ գրուած անարժէք յօդուած, ամէն ինչը կը մնայ նոյնը եւ ամէն մի չինովնիկի, պետական պաշտօնեայի, կամ «գոռբալի» համար բաց կը մնայ շարաշահումների դաշտը եւ կը տիրի ուժեղի իրաւունքը: (Այստեղ արժէ յիշել, որ Գերմանիայում թագաւորական պալատից անկախ դատարանի հիմքը դրուել է 1735 թուականին, պրուսական թագաւոր՝ Ֆրիդրիշ Վիլհելմ առաջինի կողմից):

Այս ամէնը անցեալ է եւ ցաւօք շատ դառը անցեալ, որի արդիւնքն էր Հայաստանի բնակչութեան միանգամից աղքատացման, գործազրկութեան եւ երկրից հեռանալուն: Տեղին հարց է առաջանում՝ նախկին եւ այսօրուայ իշխանութիւնները ինչպիսի՞ պատասխան են տալու

պատմութեան, հայ ժողովրդի եւ այն հարիւրհազարաւոր մայրերի, երեխաների, երիտասարդների, դեռատի աղջիկների հարցումներին, ովքեր թափառելու ելան, օտար երկրներում ապաստան, աշխատանք եւ օրհասց որոնելու համար:

Այս ամէնը գիտի ամէն մի հայ եւ գիտի, թէ ինչու ենք այս օրին հասել, բայց արդէն յուսահատութիւնից եւ աշխատելու ասպարէզ չնկատելով այնքան կրաւորական է դարձել, որ այլ ելք չի տեսնում քան կառչել հայութիւնը ի մի բերող նրա ցաւից՝ ցեղասպանութիւնից, որտեղ ոչ մի իւրային նրան այդ իրաւունքը վերապահել ի գորու չէ: Մի խօսքով նա գտնուում է՝ «գառիթափին վրայ»։ Բայց ես ուզում եմ հաւատալ Պարոյր Սեւակի աֆորիզմին, որ, «երբ ելք ու հնար չի լինում, ապա խենթերն են գտնում ելք ու ճար»: Այո, երեւի նաեւ մեր օրերում կը գտնուեն խենթեր, ովքեր չեն վախենայ արհաւիրքներից, իրենց ձայնը բարձրացնեն եւ ելք որոնելու կոչեր կը հնչեցնեն:

**Bid Request**  
**General Contractors**

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E10-16, Module 12.1 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, June 30, 2010. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for thirty-seven multi-family dwelling/units. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for June 16, 2010, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Offices, 2800 N. Clybourn Ave., Burbank, California.

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**

**PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ ԴԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ քնքարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քարուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*  
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

### ՍԱՆ ՏԻԿՈՅԻ ՍՈՒՐԲ ՅՈՎՅԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԶԱՅՑ. ԵԿԵՂԵՑՈՅ 33ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԸ

Շաբաթուաթված էջ 8-էն

Սուրբ Պատարագին Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ Կիրակնօրեայ վարժարանի աշակերտներուն հետ, քաջալերեց եւ օրհնեց զիրենք: Ապա Եկեղեցւոյ Խոշարեան Սրահին մէջ տեղի ունեցաւ տարեդարձի ճաշկերոյթ, որու ընթացքին գործադրուեցաւ վայելուչ յայտագիր մը: Օրուան հանդիսավարն էր Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Ատենապետ՝ Բրշ. Մայքա Սրկ. ձէնտեան: Սրբազան Հայրը, Տէր Հայրը եւ գլխաւոր սեղանին հիւրերը թափօրով առաջնորդուեցան դէպի սրահ: Արժ. Տ. Տաթև Աւագ Քհնյ. Թաթևեանի առաջնորդութեամբ, Կիրակնօրեայ եւ Շաբաթօրեայ վարժարաններու աշակերտները աղօթեցին եւ արտասանեցին: Հանդիսավարը բարի գալուստ մաղթեց եւ ներկայացուց

լութեան: Եկեղեցւոյ 33րդ Տարեդարձին առթիւ պատրաստուած գրքոյկին մէջ Ծուխին Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Տաթև Աւագ Քհնյ. Թաթևեան գրած էր հետեւեալ պատգամը.- «Եկեղեցւոյ 33րդ տարեդարձի տօնակատարութեանց առիթով, հայրական ջերմ սիրով կ'ողջունեմ ու բարի գալուստ կը մաղթեմ ձեր բոլորին:

Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Առաքելական Եկեղեցին անձանձրոյթ կը շարունակէ օրհնաբեր իր սուրբ առաքելութիւնը Սան Տիէկոյի եւ շրջանի համայն հայութեան: Եկեղեցին իր հիմնադրութեան սկզբնական շրջանէն մինչեւ այսօր արձանագրած յաջողութիւնները՝ հոգեւոր, մշակութային, ընկերային ու բարեսիրական բնագաւառներէն ներս, կը պարտի անցեալի ու ներկայի նուիրեալ բարեպաշտ անդամներուն, եկեղեց-

### ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ «ԶԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԵՐՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ» ՆԻԹԻՆ ՇՈՒՐՁ

Շաբաթուաթված էջ 8-էն

քին, վարդապետութեան, ուսուցումներուն, ու մանաւանդ մեր հայրերու աւանդին, որուն հաւատարիմ մնացին անցեալի սերունդը նոյնիսկ մահուան գնով:

Դասախօսութեան աւարտին, Համլեթ Սրկ. Մեհրապեան շնորհակալութիւն յայտնեց առաջին հերթին Առաջնորդ Սրբազան՝ Գերշն. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, որ մօտէն կը հետաքրքրուի ու կը քաջալերէ վարչութեան աշխատանքները: Ծնորհակալութիւն յայտնեց նաեւ օրուան դասախօսին, ներկաներուն եւ Տոքթ. Սարգիս Սրկ. Մեսրոպեանին, որ օրուան ձեռնարկին հիւրասիրութիւնը հովանաւորած էր, ապա հրաւիրեց

Սրբազան Հայրը որ իր փակման խօսքը փոխանցէ: Սրբազան Հայրը իր խօսքին մէջ անդրադարձաւ այն իրողութեան, որ այսպիսի դասախօսական շարքերը պէտք է որ յաճախակի ըլլան եւ տարբեր-տարբեր շրջաններու մէջ, որպէսզի մեր եկեղեցւոյ գաւառները ըստ այնմ պատրաստուին եւ գինուին այսպիսի հոսանքներու դէմ, որոնք կը փորձեն մեզ մեր արմատներէն խլել: Սրբազան Հայրը բարձրօրէն գնահատեց դասախօսին ներկայացուցած սքանչելի դասախօսութիւնը եւ յոյս յայտնեց, որ ապագային պիտի շարունակուին նման աշխատանքները: Սրբազան Հօր աղօթքէն ետք ներկաները հրաւիրուեցան թեթեւ հիւրասիրութեան, ուր տեղի ունեցան նաեւ մտերմիկ զրոյցներ:

### ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՆՉԱՑԻՈՒՄ Ե

Շաբաթուաթված էջ 14-էն

քանդուող եկեղեցիներին եւ գերեզմանոցի առնչութեամբ ոչ մի համապատասխան ներկայացուցիչ չի այցելել զիւր, եւ չի կատարուել որեւէ ուսումնասիրութիւն:

Վանի «Հաւաքական կեանք» կազմակերպութեան (KOLYAD) նախագահ Հիւսէն Ուրգիւնը քանդուած եւ թալանուած եկեղեցու եւ գերեզմանատան առնչութեամբ ասել է հետեւեալը. «Թէ կրօնական

եւ թէ պատմութեան հանդէպ ունեցած յարգանքի տեսանկիւնից տհաճ իրավիճակ է ստեղծուած: Աւելի լաւ կը լինէր, որպէսզի մեր գաւառի գրօսաշրջութեան զարգացման նպատակով ոչ թէ քանդէին, այլ վերակառուցէին եւ ներկայացնէին հանրութեանը, որով եւ նմանօրինակ դէպքերի կրկնութիւնը կը կանխուէր: Այս ամէնը տեղի չէր ունենայ, եթէ ժամանակին իրաւասու անձինք ձեռնարկէին համապատասխան գործողութիւններ»:



գլխաւոր սեղանին հիւրերը: Ապա տեղի ունեցաւ Տարեդարձի Կարկանդակի հատուած եւ մոմավառութիւնը:

Իր սրտի խօսքը ուղղեց Տէր Հայրը, երախտագիտութիւնը յայտնելով Առաջնորդ Սրբազան Հօր եւ գնահատելով հաւատացեալներուն ներկայութիւնը եւ մասնակցութիւնը եկեղեցւոյ հոգեւոր առաքե-

ւոյ ենթակայ կազմակերպութեանց եւ գաղութիս հաւատացեալ ընտանիքներու եւ անհատներու բարոյական ու նիւթական օժանդակութեանց: Ծնորհակալութիւն բոլորիդ:

Աստուծոյ օրհնութեամբ, հաւատքով, աղօթքով ու ծառայասիրութեամբ, ամէն բարի գործ եւ Աստուածահաճոյ ծրագիր յաջո-

ղութեամբ կը պսակուի: Սիրով ու միաբան կ'աշխատինք եւ ինչ որ կը կատարենք, միշտ Աստուծոյ փառքին եւ մեր հայ ազգի աւելի պայծառ ապագայի եւ յաւերժութեան համար թող ըլլայ»:

Տէր Հօր խնդրանքին ընդունալով, Սրբազան Հայրը որպէս Տարուան Ծխականը՝ վկայագիր յանձնեց Տիկին Սօսի Պիրիճիք Գլխեանի եւ Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Քնար Գասարճեանի: Իսկ Առաջնորդարանի «Հայ Ոգի» (Hye Spirit) Ծքանշանով պարգեւատրեց Տիկին Վիվիլըն Յակոբեանը, Տիար Կրէկըրի Պապիկեանը եւ Տիար

ձորձ Օհանեանը:

Սրբազան Հայրը իր փակման խօսքին մէջ գնահատեց Տէր Հօր, Ծխական Խորհուրդին, Տիկնանց Միութեան եւ յարակից կազմակերպութիւններուն նուիրեալ եւ համերաշխ համագործակցութիւնը: Ծնորհաւորեց Տարուան Ծխականի վկայագիր ստացողները եւ «Հայ Ոգի» Ծքանշանին արժանացողները: Յոյս յայտնեց, որ Ծուխի հաւաքական ջանքերուն շնորհիւ ապագային պիտի ունենան եկեղեցւոյ ընդաճակ եւ նոր համալիր մը՝ լաւագոյնս ծառայելու համար շրջանի հայ հաւատացեալներուն:

**Join Homenmen Armenian Athletic Association**

**Basketball. Tennis. Martial Arts. Table Tennis. Chess. Soccer.**

**Boys and Girls Ages 8 through 17!**

If interested:

**Call (818) 660-5HMM or email info@homenmen.org**

**Homenmen has been Building Teamwork and Leadership Skills in Armenian Youth Since 1921**

[www.homenmen.org](http://www.homenmen.org)

### ՎԻԿ ԴԱՐՉԻՆՅԱՆ. «ՆՊԱՏԱԿԱ ԿՐԿԻՆ ԲԱՑԱՐՁԱԿ ԶԵՄՊԻՈՆԻ ԳՕՏԻՆԵՐԸ ՄԻԱԴՈՐԵԼՆ Է »

Աւանդույթի համաձայն, վախժանգ Դարչինեանը հերթական մենամարտից յետոյ ժամանել է Հայաստան, իր երկրպագուների հետ կիսելու պրոֆեսիոնալ կարիերայում տարած 35-րդ յաղթանակը (27-ը՝ նոկաուտով):

Մայիսի 20-ին Աւստրալիայի Պարամատա քաղաքում նա մրցավարների միաձայն որոշմամբ միաւորներով պարտութեան մատնեց փորձառու ֆրիլայինցի էրիկ Բարսելոնային, նրանից խլելով 53,5 կգ քաշային կարգում IBO-ի գոտին:

Հայ մարզասէրները, անշուշտ, դիտել են այդ մենամարտը, սակայն չի չեցնենք, որ վիկը չնայած ուրիշ էր մտել նոկաուտ անող ձախ ձեռքի կոտորուածքով, սակայն դա չի անհաղթեց մրցակցին երեք անգամ նոկաուտ անել:

Աշխարհի չեմպիոնը սիրով պատասխանեց մեր հարցերին:  
- Կրկին չեմպիոնական երեք գոտի ես կրում, բայց այս անգամ աշխարհի բացարձակ չեմպիոն չեմ: Ինչո՞ւ:

- Որովհետեւ երկուսը՝ WBC/WBA, 52,2 կգ քաշային կարգին են, իսկ այս մէկը՝ IBO-ինը, 53,5 կրկնորամինը: Բացարձակ չեմպիոն լինելու համար բոլոր գոտիները պէտք է լինեն միեւնոյն քաշային կարգում:  
- Ինչո՞ւ որոշեցիր մէկ քաշային կարգ բարձրանալ:

- Որովհետեւ 52,2-ում, որտեղ պաշտպանել եմ երկու գոտիներս, Դոնեթը հրաժարուած է ինձ հետ ուրիշ մտնել: Բայց դեռ սպասում եմ նրան: Հենց համաձայնութիւնը տուեց, պատրաստ եմ յաջորդ իսկ օրը նրա հետ ուրիշ մտնել: Իսկ այս քաշային կարգում կաջ ֆեռնանդօ Մոնտիէլը: Նա աշխարհի ուժեղագոյն բռնցքամարտիկներից է, երկու գոտի ունի՝ WBO/WBC: Նա այս պահին ցանկանում է ինձ հետ հանդիպել: Եթէ մեր մենամարտը կայանայ եւ յաղթեմ, 53,5-ում IBO-ի գոտուն կ'աւելանան նրա երկու գոտիները եւ ես կրկին բացարձակ չեմպիոն կը հռչակուեմ:

- Պրոֆեսիոնալ բռնցքամարտում դու բազմաթիւ ռեկորդներ ես սահմանել: Սէկն էլ Մայիսի 20-ին սահմանեցիր:

- Այո: IBO-ի գոյութեան 25-ամեայ պատմութեան մէջ ես առաջինը դարձայ եւ միակն եմ, ով երեք քաշային կարգերում գոտի է նուաճել եւ աշխարհի չեմպիոն դարձել:

- Վերադառնա՞նք Բարսելոնայի հետ մենամարտին, որից առաջ ձեռքը լուրջ վնասել էիր:

- Մարտից երեք շաբաթ առաջ մարզումային մարտի ժամանակ մրցակցիս, որը վեց կարգ բարձր քաշային կարգում աշխարհի չեմպիոն է, գլխին հարուածելու ժամանակ ճկոյթս կոտորուեց: Լաւ էր՝ ժամանակ կար ձեռքիս մի քիչ հանգիստ տալ: Երեք շաբաթում այն բուժել հնարաւոր չէր: Բայց կոտորուածքով զբաղող մասնագէտները լուրջ պրոֆեսիոնալներ էին: Նրանք ձեռքս փաթաթեցին այնպէս, որ մարտի ժամանակ ճկոյթս մի փոքր հեռանայ ու հարուածների ժամանակ շատ չցաւի: Ես շատ լաւ էի նախապատրաստուել մենամարտին, վստահ էի ուժերիս, ուզում էի, որ մարտն անպայման կայանայ: Դրա համար էլ չէինք ուզում, որ ունէ մէկն իմանայ կոտորուածքի մասին: Ժիշդ է, մեր գաղտնիքը բացուեց մարտից մի երկու օր առաջ, բայց մենամարտը, այնուամենայնիւ, կայացաւ: Եւ թէ ինչպէս աւարտուեց՝ արդէն գիտէք:  
- Դա՞ էր պատճառը, որ նոկաուտ չգրանցուեց:

- Այո: Ժիշդ է՝ հարուածում էի, բայց այնպէս, որպէսզի ճկոյթս իրեն զգալ չտայ: Ու վնասուեց նաեւ բուժ մատս:

- Պարամատայում Դարչինեանի թիմի տղաները չկային: Անսովոր չէ՞ր:

- Նրանք, ինչպէս ասում են, ֆրիլայինցիներն են բացակայում: Բայց ամբողջ օրը, անգամ՝ մարտի, մշտապէս հեռախօսային կապի մէջ էին: Բայց յոյս ունեմ, որ նման բան այլեւս չի լինի:

- Առաջիկայում ի՞նչ ես անելու:

- Հիմա երեք տարբերակ կայ ու բոլորն էլ լաւ են: Պիտի տեսնենք, թէ ո՞րը կ'ստացուի: Դոնեթի եւ Մոնտիէլի մասին արդէն ասացի: Նրանցից որի հետ էլ մենամարտեմ, բացարձակ չեմպիոնի տիտղոսի համար է լինելու: Երրորդը «Ring» հեղինակաւոր հանդէսի մրցանակն է՝ «Սուպեր չեմպիոնի» գոտին, որին շատ քչերն են արժանացել: WBC-ին ինձ այդ հնարաւորութիւնը տալիս է: Այդ գոտու համար մենամարտում ես տուեալ քաշային կարգում աշխարհի երկու ուժեղագոյնները: Հնարաւոր է, որ նոյն Մոնտիէլն ու Դոնեթը միմեանց դէմ ելնեն: Այդ դէպքում նրանց յաղթողը պարտաւոր է լինելու մենամարտել ինձ հետ: Ինչպէս ասում են, նա արդէն փախչելու տեղ չի ունենայ:

- Դու նաեւ Ռաֆայէլ Մարկես-Իսրայէլ Վասկես մենամարտի յաղթողի հետ ռինգ մտնելու ցանկութիւն ես յայտնել:

- Ժիշդ է: Եւ երրորդ ուսուողում յաղթեց Մարկեսը: Նա նոյնպէս աշխարհում շատ բարձր հեղինակութիւն ունի: Ես հաճոյքով նրա հետ կը մենամարտեի: Բայց առայժմ գուցէ մի փոքր սպասեմ, որովհետեւ Մարկեսը գոտի չունի: Նրա եւ Վասկեսի մենամարտն աւելի շատ անուան, հեղինակութեան համար էր: Ինձ թւում է, որ սրանից յետոյ Մարկեսն արդէն գոտու համար ուրիշ կը մտնի եւ յոյս ունեմ, որ կը յաղթի: Այ, այդ ժամանակ իմ ու նրա մենամարտը հետաքրքիր կը լինի:

- Բայց նա քո նոր քաշային կարգից երկու աստիճան բարձր է: Կը կարողանա՞ս այդքան ծանրանալ ու յաղթել:

- Ես առանց այդ էլ ստիպուած բաւականին քաշ եմ գցում: Ժիշդ է, մարտը կայանալու դէպքում նա ուրիշում չափսերով ինձանից աւելի մեծ կը լինի, բայց վստահ եմ, որ ուժս կը բաւականացնի:

- Յաջորդ մենամարտդ նշանակուած է Օգոստոսի 21-ին:

- Այո: Բայց ձեռքս լիովին բուժելու համար, հնարաւոր է, մտ 20 օր յետաձգուի:

- Երբ Գերի Շոուն աշնանը Երեւանում էր, քո մենամարտերից մէկը Յայաստանում կազմակերպելու հնարաւորութիւններն էին քննարկուում: Յայ մարզասէրը դրա հնարաւորութիւնը կ'ունենա՞ր:

- Հարցն օրակարգում է: Բայց քանի որ ներկայ պահին գոտիների համար պայքարի մասին է խօսքը, ոչ մի չեմպիոն Հայաստան գալ չի համաձայնի: Դրա համար էլ ձեռնտու է, որպէսզի ես գնամ նրանց երկրներ ու այնտեղ գոտիները վերցնեմ: Դրանից յետոյ, կարծում եմ, հնարաւոր կը լինի արդէն 1-ին համարներից մէկին բերել այստեղ:

- Որքան տեղեակ եմ, Ռուսաստանի հայերի միութեան նախագահ Արա Արախանեանն էլ քեզ առաջարկել է մենամարտ կազմակերպել Մոսկուայում:

- Իրօք, նման ցանկութիւն նա ինձ յայտնել է: Ժամկէտը մօտաւորապէս Նոյեմբեր ամիսն է: Տեսնենք, թէ ինչ կը ստացուի: Ես էլ շատ եմ ուզում մէկ մարտ Մոսկուայում անցկացնել:

**World Cup 2010 Viewing Party**

All matches start at 11:30am  
Doors will open at 11 am

Admission is Free  
Food will be sold

SOUTH AFRICA 2010

June 12 England vs USA	June 27 Round of 16
June 20 Brazil vs Ivory Coast	July 3 Quarterfinal
June 26 Round of 16	July 10 Third Place Match

**JULY 11 WORLD CUP FINAL!**

Pasadena Homenmen Center  
1060 N. Allen Avenue  
Pasadena, CA 91104

For info visit  
www.homenmen.org  
or call 1-818-660-5HMM